2024, ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 17 (661)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի և դպրության օրվա առիթով



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական օրհնությամբ Մեր շնորհավորանքներն ենք հղում կրթության գործի նվիրյալներին, բոլոր մանկավարժներին, ուսանողներին և աշակերտներին՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվա առիթով:

Նվիրական այս օրը վերստին բացվում են կրթական հաստատությունների դռները՝ իրենց հարկից ներս ընդունելու ուսումնասեր մեր զավակներին:

Կրթօջախներում ամբարած գիտելիքներն ու իմացությունը գրավականն են մեր զավակների ինքնության կերտման և մեր երկրի առաջընթացի ու զարգացման, իսկ կրթության հետ փոխանցվող հոգևոր-բարոյական մնայուն արժեքները՝ հայրենասիրության, ազգասիրության և մեր սրբությունների հանդեպ հավատարմության:

Արդարև, ինչպես վկայում է սուրբգրային խոսքը. «Երբ իմաստությունը մտնի սրտիդ մեջ, և գիտությունը ախորժելի լինի հոգուդ, այն ժամանակ բարի խոհերը պիտի զգուշացնեն քեզ, և արդար մտքերը քեզ պիտի պահպանեն» (Առակ. Բ 10):

Սիրելի՛ մանկավարժներ, թող Տերը առատորեն արդյունավորի ձեր նվիրյալ ջանքերը՝ հայրենյաց ավանդներով ու հոգևոր-ազգային արժեքներով կրթելու և դաստիարակելու ուսումնատենչ ու շնորհաշատ մեր զավակներին՝ հանուն հայրենիքի զորացման և մեր ժողովրդի առաջընթաց կյանքի:

Սիրելի՛ աշակերտներ և ուսանողներ, Մեր աղոթքն է, որ Բարձրյալն Աստված քաջարթուն միտք պարգևի ձեզ, և ուսումնական նոր տարում առավել փութաջանորեն լծվեք նորանոր գիտելիքներ ամբարելուն:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը և ողորմությունը լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Արցախի Հանրապետության անկախության օրվա առիթով

Սիրելի՛ ժողովուրդ,

Սեպտեմբերի 2-ն Արցախի անկախության օրն է:

Արցախի բռնազավթման և ամբողջական հայաթափման պայմաններում մենք շարունակում ենք նշել պատմական այս օրը, քանզի Արցախն անցյալ չէ, այն պատմական հայրենիք է, ուր արցախահայությունը հազարամյակներով ապրել ու արարել է, արյամբ ու քրտինքով պաշտպանել իր ինքնությունը, հայրերի ավանդներն ու սրբազան արժեքները, փայփայել լուսավոր գալիքի իր նվիրական երազները:

Մենք շարունակում ենք նշել Արցախի անկախության օրը նաև որպես արդար ընդվզում ընդդեմ մեր ժողովրդի հանդեպ իրագործված ցեղասպանության, բռնության ու ատելության: Բռնությունը չի կարող ջնջել մարդկային հիշողությունը և չի կարող խլացնել արդարության ձայնը: Մենք հավատում ենք, որ պատմական մեր հիշատակները և մեր նախնյաց սխրանքները զորացնելու են մեզ, և մեր ժողովուրդը հավատով ու հույսով հաղթահարելու է պատերազմի աղետալի հետևանքները, հայրենասեր ու ազգանվեր ոգով հետամուտ է լինելու իր համազգային իղձերի ու տեսիլքների իրականացմանը:

Արցախի անկախության օրվա հիշատակումը ևս մեկ պատգամ է մեր ժողովրդին և մարդասիրության բարձր արժեքների ջատագով միջազգային հանրությանը՝ գործուն ջանքեր ներդնելու հանուն արդարության ու ճշմարտության հաղթանակի, հանուն արցախահայության ոտնահարված իրավունքների պաշտպանության և Արցախի հայկական բազմադարյա հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության:

Նվիրական այս օրը մեր սրտաբուխ աղոթքը բարձրացնենք առ Աստված՝ հանուն Արցախի ազատագրության ու պաշտպանության իրենց կյանքն ընծայած բոլոր քաջորդիների, ինչպես և Տիրոջ օգնականությունը հայցենք Արցախի պատանդառված ռազմաքաղաքական ղեկավարների և գերեվարված մեր բոլոր զավակների շուտափույթ ազատ արձակման համար:

Թող Երկնավոր Տերը միշտ առկայծ պահի մեր ժողովրդի զավակների հոգիներում սերն ու հավատարմությունը հանդեպ հայրենի երկիրը, խաղաղություն ու միսիթարություն սփոի հայրենական մեր կյանքում և դեպի լուսավոր ու հաղթական հանգրվաններ առաջնորդի համայն ազգիս: Ամեն:

Սեպտեմբերի 2, 2024 թ.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սեպտեմբերի 10-ին **ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, Քաղաքակրթությունների դաշինքի բարձր հանձնակատար Միգել Անխել Մորատինոսին: Հանդիպմանը Նորին Սրբությունը ՄԱԿ-ի ներկայացուցչի ուշադրությունը հրավիրեց տարածաշրջանում տիրող ծանր իրավիճակին և Հայաստանի առջև ծառացած անվտանգային մարտահրավերներին՝ մասնավորապես անդրադառնալով Ադրբեջանի զավթած սահմանամերձ տարածքների, բռնի տեղահանված արցախահայերի իրավունքների պաշտպանության, Բաքվում տակավին պահվող գերիների և Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգության ոչնչացման ու յուրացման խնդիրներին: Վերջիններիս պատշաճ և արդարացի հանգուցալուծման հարցում Հայոց Հայրապետը կարևորեց միջազգային հանրության, բարեկամ երկրների գործուն աջակցությունը: Նորին Սրբությունն իր գոհունակությունն արտահայտեց ՄԱԿ-ի Քաղաքակրթությունների դաշինքի՝ մարդու իրավունքների պաշտպանության և հոգևոր-մշակութային արժեքների պահպանության ուղղությամբ ձեռնարկվող քայլերի առիթով:

Իր հերթին տիար Միգել Մորատինոսն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց Քաղաքակրթությունների դաշինքի գործունեության հիմնական ոլորտները՝ պատրաստակամություն հայտնելով իր ղեկավարած գերատեսչության լիազորությունների շրջանակներում շարունակել նպաստել բարձրաձայնված հիմնախնդիրների կարգավորմանը: ➥ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալին

➥ էջ 1

Զրույցի ընթացքում նաև անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեխնամ առաքելությանը, առկա ծանր իրավիճակում իրականացվող ծրագրերին, ինչպես նաև արցախցիների ոտնահարված իրավունքների պաշտպանության նպատակով գործակցությանը քույր եկեղեցիների և միջազգային ու միջեկեղեցական պատկան կառույցների հետ: Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության խնդրում կարևորվեց նաև իրավիճակի գնահատման նպատակով անկախ փորձագետների առաքելության կազմակերպումը, ինչպես և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործուն ներգրավվածությունը:

Սեպտեմբերի 14-ին

Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) նախկին դատախազ Լուիս Մորենո Օկամպոյին ու «Ճշմարտության և արդարության կենտրոն» կազմակերպության անդամներին՝ ուղեկցությամբ Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպս. Մանուկյանի:

Ողջունելով ՄՔԴ-ի նախկին դատախազի այցը հայոց հոգևոր կենտրոն՝ Նորին Սրբությունը տեղեկություններ փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ հայ ժողովրդի կյանքում ունեցած կարևոր դերակատարության, հոգևոր, մշակութային արժեքների, ազգային ինքնության կերտման և ազգապահպան առաքելության մասին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց տիար Օկամպոյին՝ միջազգային տարբեր ատյաններում հայ ժողովրդի և արցախահայության արդար իրավունքների պաշտպանության, Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության դատապարտման և գերիների վերադարձման գործում ներդրած ջանքերի համար:

Խոսելով երկրի առջև ծառացած անվտանգային հիմնախնդիրների մասին՝ Հայոց Հայրապետն իր մտահոգությունները բարձրաձայնեց՝ ընդգծելով, որ Եկեղեցին մշտապես իր կարելի նպաստն է բերում առկա մարտահրավերների հաղթահարմանը, արցախահայերի հոգևոր և հումանիտար կարիքների բավարարմանն ու նրանց ապահով ապագայի կերտմանն ուղղված ջանքերին: Հիշյալ խնդիրների ամբողջական լուծման ուղղությամբ Վեհափառ Հայրապետը կարևորեց ինչպես միջազգային հանրության գործուն աջակցությունը, այնպես էլ տիար Օկամպոյի ծավալած գործունեությունն ի խնդիր արդարության հաստատման և մարդու իրավունքների պաշտպանության:

Իր հերթին Լուիս Մորենո Օկամպոն Նորին Սրբությանը ներկայացրեց իր մտածումներն ու նախաձեռնած գործողություններն Ադրբեջանի կողմից Հայաստանի բռնազավթված տարածքների ազատագրման, Արցախում իրագործված էթնիկ զտումների բարձրաձայնման, Ադրբեջանում պահվող հայ գերիների ազատ արձակման ուղղությամբ՝ ընդգծելով միջազգային իրավունքի սկզբունքների գործնական կիրառման անհրաժեշտությունը: Այս առնչությամբ տիար Օկամպոն կարևորեց աշխարհասփյուռ հայության համախմբումն այդ սկզբունքները կյանքի կոչելու գործում: ՄՔԴ-ն նախկին դատախազն անդարձավ նաև Հայ Եկեղեցու կարևոր դերակատարությանը՝ տեղահանված արցախահայերի հոգևոր առաջնորդության, նրանց ոտնահարված իրավունքների պաշտպանության և գերիների վերադարձման ուղղությամբ:

Մայր Աթոռին ընծայաբերվեց Սուրբ Վլաս եպիսկոպոս Սեբաստացու մասունքը



Սեպտեմբերի 9-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց շվեյցարահայ գործարար և բարերար տիար Վահե Գաբրաշին, որը Սուրբ Էջմիածին էր այցելել Մայր Աթոռին ընծայաբերելու Սեբաստիայի եպիսկոպոս, համաքրիստոնեական սուրբ հայազգի Վլաս Սեբաստացու (III–IV դ.) մասունքը:

Նորին Սրբությանը փոխանցելով հայազգի սրբի մասունքարանը՝ տիար Գաբրաշն ուրախությամբ ընդգծեց, որ այն Սուրբ Էջմիածնին է նվիրաբերում մյուռոնօրհնության և Մայր տաճարի վերաօծման պատմական առիթով:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական սերն ու օրհնությունը բերեց տիար Վահե Գաբրաշին՝ բարձր գնահատելով վերջինիս նախանձախնդիր ոգին, այլև հավատարմությունն ու նվիրումը հանդեպ Սուրբ Էջմիածինը:

Վեհափառ Հայրապետը նաև գոհունակությամբ արձանագրեց այն օգտաշատ ծառայությունները, որոնք մեծանուն բարերարը շարունակաբար մատուցում է հայրենիքին և Հայոց Եկեղեցուն:

Սուրբ Վլաս եպիսկոպոսի մասունքարանն ի պահ հանձնվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գանձատանը, ուր այցելու հավատավոր ուխտավորները հնարավորություն կունենան հաղորդակից դառնալու սրբի մասունքներից ճառագող օրհնությանը:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Ղևոնդ աբդ. Սաղաթելյանը ծառայության է կոչվել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակությունում, իսկ Տ. Դերենիկ աբդ. Սահակյանը ծառայության է նշանակվել Դամասկոսի հայոց թեմում:

Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնադրման 150-ամյակի առիթով շրջանառության մեջ է դրվել նոր արծաթե հուշադրամ

Հուշադրամը հատվել է Լեհաստանում՝ պրուֆ որակով, 925 հարգի արծաթով, որը կշռում է 33,6 գր: Թողարկվել է 500 հատ՝ 1000 դրամ անվանական արժեքով: Հուշադրամի դիմերեսին ճեմարանի պատկերանիշն է, հատված ճեմարանի ուխտերգից, Սուրբ Հոգին խորհրդանշող աղավնի և խաչքարի վարդյակ: Դարձերեսին ճեմարանի շենքն է և Գևորգ 4-րդ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի դիմապատկերը, որի ջանքերով 1874 թ. հիմնադրվեց ճեմարանը:

Շուշիի «Վարանդա» մանկապատանեկան երգչախումբն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Սեպտեմբերի 6-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Շուշիի «Վարանդա» մանկապատանեկան երգչախմբին՝ ուղեկցությամբ երգչախմբի հիմնադիր-ղեկավար տիար Զաքար Քեշիշյանի:

«Վարանդա» մանկապատանեկան երգչախումբը, որն ամբողջությամբ բաղկացած է արցախահայերից, «Երգող Արցախ» վերնագրի ներքո համերգային ծրագրեր է իրականացնում Հայաստանի տարբեր շրջաններում:

Հանդիպման սկզբում տիար Քեշիշյանը սրբազան հորը ներկայացրեց հյուրերին՝ տեղեկություններ փոխանցելով երգչախմբի հիմնադրման և գործունեության մասին:

Այնուհետև Նաթան սրբազանը, ողջունելով ներկաներին, վերջիններիս փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական սերն ու օրհնությունը և իր գնահատանքը բերեց երգչախմբի անդամներին՝ հայրենիքի համար ծանր ու դժվարին օրերին իրենց գեղեցիկ կատարումներով հայորդիներին ուրախություն, սեր, մխիթարություն ու ապագայի հանդեպ հույս պարգևելու համար:

Սրբազան հայրը նաև հորդորեց պատանիներին Շուշին միշտ վառ պահել իրենց հոգիներում, սիրել հայրենի Արցախը, ապրել և արարել Արցախով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ եպիսկոպոսաց ժողով

Սեպտեմբերի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հայաստանյան թեմերի առաջնորդների և Մայր Աթոռում սպասավորող եպիսկոպոսների ժողով: Ողջունելով ժողովականներին՝ Նորին Սրբությունն ուրախությամբ ընդգծեց, որ Մայր տաճարի վերաօծման և մյուռոնօրհնության արարողությունների նախապատրաստական աշխատանքներն ամփոփման փուլում են:

Այնուհետև զեկույցով հանդես եկավ մյուռոնօրհնության, Մայր տաճարի վերաօծման և հարակից միջոցառումների կազմակերպման համակարգող հանձնախմբի ատենապետ, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը՝ ներկայացնելով հանձնախմբի իրականացրած աշխատանքները:

Տեղեկացվեց, որ սրբազան արարողություններին մասնակցելու են Հայաստանից ու Սփյուռքից բարձրաստիճան եկեղեցականներ, ազգային կյանքում նշանակալի դերակատարություն ունեցող հայորդիներ, քույր եկեղեցիների և միջեկեղեցական կազմակերպությունների պատվիրակներ, պետական, դիվանագիտական, հասարակական, գիտակրթական, մշակույթի ու արվեստի ոլորտի ներկայացուցիչներ, այլև ուխտավորներ և հյուրեր:

Արարողությունների իրազեկման համար պատրաստվել ու հրապարակվել են հոլովակներ, հանրապետության տարբեր շրջաններում տեղադրվել են իրազեկող պաստառներ, հրատարակվել են ճանաչողական գրքեր, հանրամատչելի գրքույկներ և թերթոններ: ➥ էջ 3

Խաչվերաց տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Սեպտեմբերի 15-ին՝ Խաչվերաց տոնին, Սուրբ Գայանե վանքում մատուցվեց տոնական պատարագ: Տոնական ղողանջների ուղեկցությամբ հոգևորականների թափորը և հավատացյալները Վեհափառ Հայրապետին ուղեկցեցին Սուրբ Գայանե վանք՝ հանդիսապետելու տոնական պատարագը: Պատարագիչը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տեր Արշակ արք. Խաչատրյանն էր: Խաչվերացը Ս. Խաչին նվիրված տոներից մեծագույնն է, որով եզրափակվում է հինգ տաղավար տոների շղթան:

Երեկոյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում կատարվեց ժամերգություն: Այնուհետև Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի հանդիսապետությամբ Մայր տաճարի շրջափակում տեղի ունեցավ Խաչվերացի հանդիսավոր թափորը: Այդ առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հավատացյալների երկրպագության և մխիթարության համար դուրս էր բերվել տերունական սուրբ խաչափայտի մասունքն ամփոփող մասունքարանը: Կատարվեց նաև Անդաստանի կարգ, որի ընթացքում օրհնվեցին խաչը զարդարող ռեհանը և աշխարհի չորս կողմերը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ եպիսկոպոսաց ժողով

➥ էջ 2

Համաձայնություն է ձեռք բերվել ԶԼՄ-ներով Մայր տաճարի վերաօծման ու մյուռոնօրհնության առթիվ լուսաբանող հեռուստահաղորդումների կազմակերպման համար:

Անդրադարձ կատարվեց սրբազան արարողություններին հավատացյալ հայորդիների հասանելիությունն ապահովելու նպատակով ձեռնարկված տեխնիկական աշխատանքներին, որի շրջանակներում հասարակական կարգի պահպանության մարմինների հետ կանոնակարգվելու են երթևեկության ու անվտանգության հետ կապված խնդիրները: Զեկույցի ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը հանձնարարականներ տվեց թեմական առաջնորդներին՝ առավել ջանքեր գործադրել սրբազան արարողություններին ուխտավորների մասնակցությունը դյուրացնելու համար: Մասնակից եկեղեցականներն իրենց ուրախությունն ու գոհունակությունն արտահայտեցին սպասվող հոգենորոգ իրադարձությունների առթիվ:

Ժողովը եզրափակվեց աղոթքով:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Մյուռոնօրհնության՝ համազգային տոնախմբություն դառնալու նախադրյալները և քաղաքական հետագա արգելքներն ու խոչընդոտները

Դարերի ընթացքում սրբալույս մյուռոնի օրհնությունը հայ ժողովրդի կյանքում ձեռք է բերում համազգային վեհաշուք տոնախմբության նշանակություն: Հայ ազգային կյանքը մշտապես ուղեկցվում էր արհավիրքներով, և ամեն պատուհասի ժամանակ Եկեղեցին հայ ժողովրդի պահպանության և միասնության երաշխիքն էր: Մյուռոնօրհնությունն էլ ժամանակի ընթացքում դառնում է հայության միասնության խորհրդանիշ: 1912 թ. «Արարատ» ամսագրում կարդում ենք. «Միւռոնօրհնութիւնը, լինելով Հայաստանեայց եկեղեցւոյ մեծաշուք և նուիրական-կրօնական հանդէսներից մինը, գրաւել էր ուխտաւորների ահագին բազմութիւնը, որ շտապել էր Ս. Էջմիածին՝ ներկայ լինելու Ս. Միւռոնի օրհնութեան այս մեծաշուք կրօնական հանդէսին: Կրօնական-ազգային հանդէսները հայ ժողովրդի հատուածների փոխադարձ յարաբերութեան և ծանօթութեան ամենագեղեցիկ միջոցներից մէկն են. հայ ժողովրդի հեռաւոր և մերձաւոր որդիները, համախմբուելով Էջմիածնում, տեսնում են միմեանց, ծանոթանում են միմեանց կացութեանը. հեռաւոր հիւսիսի հայը, որ կտրուած է բուն երկրից և իւր լեզուով, արտաքինով հետզհետէ հեռանում է մայր ժողովրդից ու եկեղեցուց, տեսնելով հայրենի սրբութիւնները, կրօնապէս կրկին վերածնւում է»:

Մյուռոնօրհնեք, 2008 թ.

Արդեն 19-րդ դարից սկսած՝ Կարապետ Տեր-Մկրտչյանի բնորոշմամբ՝ «Արարատեան երկրի և Ս. Էջմիածնի Ռուսաց տիրապետութեան ներքոյ մտնելուց յետոյ՝ ընդհանուր ուխտագնացութեան հետ, յատկապէս Ս. Միւռոնի օրհնութեան առթիւ Մայր Աթոռ ուխտի գալը բնականաբար աւելի դիւրին դարձաւ.... բարեխնամ կառավարութեան հովհանու ներքոյ կատարեալ ապահովութիւն վայելող մեծ սրբավայրը սկսեց հետզհետէ աւելի մեծ և բազմերանգ բազմութիւն գրաւել իւր մօտ, և միւռոնօրհնութեան հանդէսը ստացավ իրօք համազգային, խիստ մեծաշուք բնաւորութիւն...»: Սակայն ոչ բոլոր մյուռոնօրհնություններն էին կատարվում մեծ շուքով, և միշտ չէ, որ շատ ուխտավորներ էին գալիս: Սակավամարդ լինելը պայմանավորված էր մեծ տերությունների միջև տեղի ունեցող պատերազմներով, որոնց ժամանակ հայ ժողովուրդը ենթարկվում էր կոտորածների և բռնաճնշումների: 1903 թ. «Արարատ» ամսագրում կարդում ենք. «Միւռոնօրհնութեան հանդիսին ուխտաւորներ եկել էին միայն ամենամօտիկ գիւղերից, իսկ հեռաւորները հեռագիրներով և մասնաւոր գրութիւններով՝ ուղղուած յանուն Վեհափառ Հայրապետի, շնորհաւորում էին եկեղեցական այդ մեծ հանդէսի կատարումը»:

Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի ձեռամբ 1878 թ. մյուռոնօրհնությունը երկարաձգվում է, ապա բավականին սակավամարդ կատարվում է ռուս-թուրքական պատերազմի պատճառով: Սակայն արդեն 1882 թ. կատարված օրհնությունը բազմամարդ էր. Սուրբ Աթոռի շուրջ ժողովվել էին հազարավոր ուխտավորներ թե՛ Արևելյան Հայաստանից, թե՛ Արևմտյան Հայաստանից և թե՛ հայաշատ բազմաթիվ գաղթավայրերից:

19-րդ դարի վերջին տասնամյակում արդեն սկսվում են Համիդյան կոտորածները: Այս հանգամանքով էր պայմանավորված, որ Մկրտիչ Ա Խրիմյան Հայրապետն իր անդրանիկ՝ 1896 թ. սեպտեմբերի 29-ին կատարվելիք մյուռոնօրհնությունը տեղափոխում է 1897 թվական, և այն բավականին սակավամարդ էր: 1897 թ. «Արարատ» ամսագրում այս ամենը պատճառաբանվում է Մայր տաճարի ներքին նորոգությամբ:

1903 թ. Խրիմյան Հայրիկը որոշել էր մյուռոնի օրհնությունը կատարել սեպտեմբերի 28-ին՝ Վարագա Սուրբ Խաչի օրը, որ տասներորդ տարեդարձն էր իր քահանայապետական օծման: Սակայն այն համընկնում է Հայ Եկեղեցու ունեցվածքի բռնագրավման՝ ցարական կառավարության որոշման հետ: Իշխանությունները վախենալով, որ ուխտավորների մեծ համախումբը կարող է վերածվել հակացարական հուժկու ցույցի, Կովկասի փոխարքա Գոլիցինի միջոցով օգոստոս ամսին հրահանգում են մյուռոնի օրհնությունը հետաձգել: Սակայն Խրիմյան Հայրիկը հակառակն է անում. օրհնում է մյուռոնը ժամանակից շուտ՝ օգոստոսի 24-ին:

Իսկ արդեն 1912 թվականից հետո՝ մինչև 1926 թվականը, մյուռոն չի օրհնվում: Այս հանգամանքը պայմանավորված էր Առաջին համաշխարհային պատերազմով և Հայոց ցեղասպանությամբ: Այս դժնդակ տարիներին Մայր Աթոռը ողողված էր սովալլուկ գաղթականներով, որբերով: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1926 թ., ձեռամբ երանաշնորհ Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի, կատարվում է մյուռոնի օրհնություն:

1926 թ. մյուռոնօրհնությունից հետո՝ մինչև 1955 թ. հոկտեմբերի 8-ը, այլևս մյուռոն չի օրհնվում: 1945 թ. Գևորգ Զ Կաթողիկոսը Կենտրոնական իշխանությանը դիմում է ներկայացնում, որով թույլատրվում է կատարել մյուռոնի օրհնություն: Գևորգ Հայրապետը որոշել էր մյուռոնն օրհնել սեպտեմբերի 29-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին: Սակայն 1946 թ. նշանակված և կառավարության կողմից հաստատված մյուռոնօրհնությունը կրկին հետաձգվում է մինչև 1947 թ. աշուն: Հետաձգման պատճառով Գևորգ Զ Հայրապետը որոշում է մյուռոնն օրհնել սեպտեմբերի 28-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին: Հետաձգման մասին լուրը հեռագրով Գևորգ Զ Կաթողիկոսը 1946 թ. օգոստոսի 28-ին հայտնում է Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Կաթողիկոսին: Այս անգամ կրկին մյուռոնի օրհնություն տեղի չի ունենում: 1949 թ. Գևորգ Զ Հայրապետը գաղտնի նամակ է գրում ԽՍՀՄ ՄԽ նախագահ Ի. Ստալինին, որտեղ նա գրում է. «Նախատեսվում է ժողովի հետ միաժամանակ կատարել Մյուռոնօրհնություն, որ պիտի լիներ դեռ անցյալ տարի և հետաձգվեց ընթացիկ տարվա աշնանը՝ կառավարության ցանկությամբ: Դա համապատասխանում էր մեր ցանկությանը, սակայն առիթ տվեց հակախորհրդային սադրանքների: Խորհրդային կառավարությունը մեղադրվում է Մյուռոնօրհնեքն արգելելու և Հայ Եկեղեցին կառավարությանը սերտաճեցնելու մեջ»:

Արդեն 1952 թ. հունիսի 12-ին Գևորգ Զ Կաթողիկոսը կոնդակով տեղեկացնում է մյուռոնօրհնության մասին: Կոնդակում կարդում ենք. «Քսանվեց տարի է, որ Ս. Էջմիածնում տեղի ունեցած չէ Սրբալոյս Միւռոնի օրհնութեան՝ հայ ժողովրդի սրտին մօտիկ նուիրական և խորհրդաւոր սուրբ արարողութիւն, որի հետևանքով զրկուել է նա հոգեկան բարձր մխիթարութիւնից.... 1926 թուից ցայսօր Սրբալոյս Միւռոնի օրհնութիւն տեղի չի ունեցել, եւ ներկայումս Հայ Եկեղեցին Սրբալոյս Միւռոնի մեծ կարիք ունի՝ նկատի առնելով նաև հայ ժողովրդի կրօնական պահանջն ու անզուսպ տենչը.... Մենք, չնայելով աշխարհի ալեկոծ վիճակին, սոյն Հայրապետական Կոնդակով, Ս. Հոգու զօրութեան եւ շնորհին ապաւինած, ծանուցանում ենք Մեր լծակից եւ գործակից եղբարց, Եկեղեցու հաւատարիմ պաշտօնէութեան եւ Մեր սիրեցեալ հօտին, որ 1953 թուին որոշել ենք Սրբալոյս Միւռոնի օրհնութիւն կատարել Հայ Եկեղեցու հնաւանդ սովորութեան համաձայն»: Այս անգամ ևս մյուռոնի օրհնությունը հետաձգվում է:

1954 թ. Գևորգ Զ Հայրապետը հեռագրով դիմում է մայր հայրենիքի և սփյուռքի թեմերին՝ 1954 թ. հրավիրելով մյուռոնօրհնության: Հեռագրում ասվում է, որ 1954 թ. սեպտեմբերի 26-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, որոշվել է մյուռոն օրհնել: Այնուհետև հեռագրում կարդում ենք, որ Հայրապետը պատվիրում է Եկեղեցու բոլոր եպիսկոպոսներին և հայրապետական թեմի առաջնորդներին գալ Էջմիածին և մասնակցել հանդեսին, ինչպես նաև սփյուռքի տասնմեկ թեմերից և Սուրբ Երուսաղեմի ու Պոլսի պատրիարքարաններից մի-մի աշխարհիկ պատգամավոր ուղարկել: Սակայն այս անգամ Գևորգ Զ Չորեքչյան Հայրապետի վերահաս մահվան պատճառով մյուռոնօրհնություն տեղի չի ունենում: Այդպես էլ երկար ու դժվար փորձերից հետո Գևորգ Զ-ին չհաջողվեց կատարել մյուռոնի օրհնություն:

1955 թ. Վազգեն Առաջինը կաթողիկոսական օծումից անմիջապես մեկ շաբաթ անց՝ հոկտեմբերի 8-ին, ձեռնարկում է մյուռոնի օրհնությունը: Չնայած խորհրդային իշխանության ոչ բարյացակամ վերաբերմունքին, Վազգեն Առաջին Հայրապետին հաջողվում է կատարել մյուռոնի օրհնություն՝ 1962, 1969, 1976, 1983, 1991 թվականներին:

Քսաներորդ դարի վերջը հայ ժողովրդի համար կարևոր նշանակություն ունեցավ: 1991 թ. Հայաստանը ձեռք բերեց անկախություն՝ անցյալում թողնելով յոթանասուն տարում ստացած խոր, անբուժելի վերքերը: Անկախության հռչակումից հետո Հայ Եկեղեցին ամեն ջանք գործի է դնում պետականաշինության սրբազան առաքելության համար:

1991 թ. մյուռոնօրհնությունից հետո մյուռոն օրհնել է Գարեգին Ա Կաթողիկոսը՝ 1996 թ.: Քսանմեկերորդ դարի առաջին մյուռոնօրհնությունը 2001 թ. կատարել է Գարեգին Բ Հայրապետը: Այնուհետև հաջորդաբար մյուռոն օրհնվել է 2008, 2015 թթ.: Հաջորդ օրհնությունը պետք է կատարվեր 2023 թ. հոկտեմբերի 1-ին, սակայն նկատի առնելով Արցախի շուրջ ստեղծված ծանր իրավիճակը՝ Գերագույն հոգևոր խորհուրդը որոշում կայացրեց հետաձգել մյուռոնօրհնությունը և հարակից միջոցառումները, ինչպես նաև հոկտեմբերի 1-ը հռչակել Արցախի համար համազգային աղոթքի օր:

2024 թ. սեպտեմբերի 28-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կկատարի իր չորրորդ մյուռոնօրհնությունը:

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

Ուր որ երթաս, ինչ որ լինիս կյանքիդ մեջ,
Սրտումդ անջինջ դու միշտ պահիր գեթ մի բան,
Թե ցուրտ գիշեր ջերմացնող շող անշեջ,
Վհատ հոգուդ խրախույս տվող հենարան՝
Մի մայր ունիս, նորան հիշիր սիրատենչ
Եվ միշտ կրկնիր՝ «Կեցցե՛ հավերժ ճեմարան»:

Հովհաննես Հովհաննիսյան

Գևորգյան հոգևոր ճեմարան — 150

Առաքելությունը շարունակվում է

Գևորգյան հոգևոր ճեմարանը հիմնադրվել է 1874 թ. Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Մեծագործ Հայրապետի կողմից: Ճեմարանն առանձնահատուկ տեղ և դեր ունի հայ մշակույթի և կրթության զարգացման պատմության մեջ: Գևորգյան ճեմարանի բացումը 19-րդ դարում՝ հայ ժողովրդի համար այդ բարդ ժամանակահատվածում, իրապես դարակազմիկ և հերոսական մի իրադարձություն էր, որի պտուղները համայն հայ ժողովուրդը որոշ ժամանակ հետո սկսեց ճաշակել: Ճեմարանն ըստ էության խտացրել է իր մեջ ամբողջ արևելահայ մշակույթը, մանկավարժությունը, դպրոցը, գիտությունը, հասարակական-քաղաքական կյանքը, ազատագրական պայքարը, եկեղեցին և հոգևոր կյանքը: Ճեմարանի հիմնադրման գաղափարը հասունացել էր վաղուց: Դեռևս 19-րդ դարի կեսերին այդ մասին բազմիցս շեշտել են Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Ս. Շահազիզը, Ռաֆֆին և ուրիշներ: Չխորանալով պատմության մեջ՝ նշենք պարզապես, որ Գևորգ Դ Կաթողիկոսը, դրսևորելով բացառիկ իմաստնություն ցարական կառավարության հետ աշխատելու ընթացքում, հասավ իր մեծ նպատակին՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն տալով հոգևոր ճեմարան ունենալու շնորհը:

Ճեմարանի գործունեության պատմությունը կարող ենք բաժանել երկու շրջափուլի՝ 1874—1917 թթ. և 1945-ից մինչև այսօր:

Առաջին փուլը շատ բուռն էր կայացման և զարգացման իմաստով, ինչպես նաև պատմաքաղաքական վայրիվերումներով: Անկախ ամեն ինչից, սակայն, պետք է նշենք, որ այդ փուլում ճեմարանը կայացավ՝ շնորհիվ ազգին նվիրաբերված մարդկային ներուժի: Մեծ է Գևորգյան հոգևոր ճեմարանի ավանդը գրականության, գիտության, մշակույթի, հասարակական-քաղաքական մտքի, մանկավարժության զարգացման բնագավառներում: Ճեմարանում են սովորել գրողներ Ավ. Իսահակյանը, Ա. Աթայանը, Լեռ Կամսարը, Կարա-Դերվիշը, Լ. Շանթը, Գ. Հայկունին, Կ. Մելիք-Շահնազարյանը, գրականագետներ Մ. Աբեղյանը, Ե. Մադաթյանը, Ա. Ջամինյանը, Պ. Մակինցյանը, բանասերներ Ռ. Աբրահամյանը, Ա. Տեր-Միքելյանը, պատմաբաններ Ա. Աբեղյանը, Ա. Աբրահամյանը, Բ. Խալաթյանը, Ա. Շահնազարյանը, երաժշտագետներ, ազգային-ազատագրական շարժման գործիչներ, հասարակական-քաղաքական և պետական գործիչներ, նկարիչներ, թատրոնի, ճշգրիտ գիտությունների, ռազմարվեստի և այլ բնագավառների նշանավոր դեմքեր: Այս շրջանի նշանավոր ճեմարանական հոգևորականներն են Գևորգ Ջ Չորեքչյան Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գարեգին Ա Հովսեփյան Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Ներսես արք. Մելիք-Թանգյանը, Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյանը, Հուսիկ արք. Զոհրապյանը, Բագրատ արք. Վարդազարյանը, Կոմիտաս վրդ. Սողոմոնյանը և ուրիշներ: Այստեղ են դասավանդել ժամանակի մեծագույն գիտնականները և հայագետները: 1917 թ. ճեմարանը ծանր պատմաքաղաքական կացության պատճառով դադարեցրեց իր աշխատանքը: Միայն 1945 թ. Գևորգ Ջ Չորեքչյան Կաթողիկոսի ջանքերով հնարավոր եղավ Ս. Էջմիածնում վերսկսել այս մեծ հաստատության աշխատանքները:

ԳՀՃ, 1890 թ.

Ի սկզբանե ճեմարանը հիմադրվել է Հայ Եկեղեցու հայաստանյան և արտասահմանյան թեմերում հոգևորականներ ապահովելու նպատակով, սակայն առաջին փուլում սաների մասնագիտական ընտրությունների ցանկը դիտարկելով՝ պետք է նշենք, որ քչերն էին հանձն առնում Աստծո սպասավորը լինելու պատասխանատու ծառայությունը: Այս իրավիճակը փոխվում է միայն 1887—1888 թթ. Կարինի թեմի առաջնորդ, մեծ աստվածաբան, հայագետ Մաղաքիա արք. Օրմանյանի դասավանդման շրջանում:

1945 թ. նոյեմբերի 1-ին ճեմարանը մտավ իր գործունեության երկրորդ փուլը, սակայն լիարժեք սկսեց գործել Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք (1955—1994), իսկ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք (1995—1999) Մայր Աթոռին վերադարձվեց ճեմարանի պատմական շենքը, որը խորհրդային կարգերի ժամանակ խլվել էր Եկեղեցուց: Գևորգյան ճեմարանի իսկական զարթոնքն ու վերելքն սկսվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ներսիսյան Ամենայն Հայոց Հայրապետի օրոք: 2002 թվականից ճեմարանն ստացավ բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ: Այսօր ճեմարանը պետականորեն ճանաչված է որպես Աստվածաբանական համալսարան:

Ճեմարանն աղոթքի և կրթության համակցման մի օջախ է, ուր հայրերից ավանդված գիտության ջահը վառ է պահվում: Ներկայումս ճեմարանում սաներն ուսումնասիրում են ամենատարբեր առարկաներ, ինչպիսիք են Հին և Նոր Կտակարանների ներածություն և մեկնություն, Սուրբ Գրքի աշխարհագրություն և հնագիտություն, վարդապետական աստվածաբանություն, դավանաբանություն, հայոց պատմություն, հայ և ընդհանուր եկեղեցական պատմություն, հայ մատենագրություն, հայրաբանություն, ծիսագիտություն, հայ և համաշխարհային գրականություն, ռուսերեն, անգլերեն, հին հունարեն, եբրայերեն և այլ առարկաներ: Ուսումնառությունը հոգևոր ճեմարանում վեցամյա է, որի ավարտին սանն ստանում է մագիստրոսի գիտական աստիճան: Այստեղ դասավանդում են հայաստանյան լավագույն մասնագետները: Այս ամենը կրթյալ և հույժ զարգացած հոգևորականներ ունենալու համար է, և ինչպես հավատացած էր Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսը, ազգի վերածնության հիմքում ընկած են պատրաստված հոգևորականները, որոնք հոգին և շունչն են հայ ժողովրդի:

Այս տարի լրանում է Գևորգյան հոգևոր ճեմարանի 150-ամյակը: Հայ Եկեղեցու բաբախող սիրտն արդեն մեկ և կես դար է՝ հայ ժողովրդին մատակարարում է սպասավորներ՝ Աստծուն և հայրենիքին ուղղված սերն ու ջերմությունն իրենց սրտերում պահած, որոնք լծված են Աստծուն և ազգին ծառայելու վեհ գործին: Տիրավանդ պատվիրանը՝ «Արդ աղաչեցեք հնձի Տիրոջը, որ մշակներ հանի հնձի համար» (Մատթ. Թ 38), ունենալով իր առաքելության հիմքում՝ ճեմարանն ընթանում է առաջ՝ գործակցած Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի հետ: Այսօր առավել, քան երբևէ, ճեմարանականը գիտակցում է, որ սրբացած հայրերի ոտնահետքերով քայլելը ենթադրում է նույնքան պատասխանատվություն, ծառայասիրություն և հանձնառություն: Առաքելությունը չի ավարտվում, այն շարունակվում է, աճում է, զարգանում և վերածվում դաշինքի՝ «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նշանաբանով, որն էլ ավելի է բորբոքում կրակը ճեմարանականի հոգում, և նա զինվորագրվում է այդ նշանաբանով առաքելությանը: Արգասաբեր երթ մեր հարազատ ճեմարանին՝ իր հայրենանվեր առաքելությունն իրագործելու ճանապարհին:

Արման սրկ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գևորգյան ճեմարանի Ջ լսարանի սան

Հուշեր և փաստեր Գևորգյան ճեմարանից

* * *

«Ամեն անգամ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեսնում էի՝ ինչպես ուսանողները շարքով գալիս են եկեղեցի, շարքով մասնակցում ժամերգությանը: Պարկեշտ, առաքինի պահվածքով ու տպավորիչ: Ներքին ցանկություն ունեի նրանցից մեկը լինել: Տակավին մանուկ էի՝ 6—7 տարեկան, և դժվար է ասել, թե դա խիստ գիտակցական մղում էր:

Տասնհինգ տարեկան էի, հերթական այցին Էջմիածին պատարագից հետո Վահան արքեպիսկոպոս Տերյանը մոտեցավ հորս, զրուցեցին, հետո հանկարծ հարցրեց՝ չէ՞ր ցանկանա, որ իր որդին հոգևոր ճեմարանում ուսանի: Հայրս դրական պատասխանեց, և մտանք ճեմարան: Պահն ինձ համար անհավանական լուրջ էր: Վայրկենական վերարթնացան տան, հարազատներիս պատկերները, և՝ վանք, խուց: Մտավախությունս էր, որ սովոր կյանքս կորցնելու եմ, չեմ կարողանալու կյանքի, աշխարհի հետ ազատ հաղորդակցվել, մտնելու եմ վանք ու վերջ, այլևս դուրս չեմ ելնելու.... Միակ ցանկությունս էր գեթ վերջին անգամ մեր տանը լինել: Մեզ երեք օր մտածումի ժամանակ տվեցին, վերադարձանք տուն, զարմանալիորեն ծնողներս տարաձայնեցին: Մայրս, որ այդքան ուզում էր ինձ ճեմարանի սան տեսնել, հանկարծ ընդդիմացավ՝ չեմ ուզում տղայիս կորցնել: Դա երևի տուրք էր ժամանակի քարոզչական պատկերացումներին: Երրորդ օրը նույնիսկ հայրս «զենքերը» վայր դրեց և ասաց, որ համաձայն է մորս հետ: Փաստորեն որոշումը ինքս պիտի ընդունեի: Եվ այդ ժամանակ տարօրինակ բան պատահեց. երբ ճեմարանի աստիճաններով բարձրանում էի, սանդղահարթակի վերևում փշե պսակով Քրիստոսի պատկերը կար, որ ինձ շատ տպավորեց: Հետո, երբ դուրս էի գալիս ճեմարանից, տեսա սաներին, որ իրենց համար մտասույզ զբոսնում էին, իրենց-իրենց երգում, խոսում, տպավորությունը տարօրինակ էր ու... գրավիչ: Եվ ծնողներիս կամքին հակառակ ես մնացի ճեմարանում: Այդ շրջանում հետապնդումներ կային, հոգևոր կրթությունը չէր խրախուսվում, մեր դասղեկը, կոմերիտմիության քարտուղարը, դպրոցի տնօրենը եկան ինձ համոզելու, հորս ստիպելու, բայց հավատացյալ հայրս անդրդվելի էր, որևէ վախ չուներ աշխարհիկ իշխանություններից, և նրանք արդյունքի չհասան»:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս

* * *

«Բազմած էր Հայոց Հայրապետը, պատկառելի մի ծերունի: Սկսավ ինձ հարց ու փորձ անել: Ես ապուշ էի կտրել-մնացել, չէի հասկանում, թե ինչ էր ասում, որովհետև խոսում էր հայերեն, իսկ ես, որպես և մեր քաղաքացիք, տաճկախոս էի, թեև հայերեն գրել-կարդալ գիտեի, բայց բոլոր առարկաները անցել էի տաճիկ լեզվով, ուստի և չէի հասկանում կարդացածս ու գրածս հայերենը: Վեհը տեսավ, որ ես հայերեն չեմ իմանում, ասաց տաճկերեն լեզվով.

— Դու զուր ես եկել այստեղ, որովհետև մեր ճեմարանում ամեն բան հայերեն է:

— Էհ, լավ ձայն ունե՞ս և երգել գիտե՞ս,— հարցնում է կաթողիկոսը:

— Այո, ունեմ ու գիտեմ:



Սողոմոնը երգում է «Լույս զվարթ» շարականը. դրվագ Գ. Խանջյանի նկարազարդումներից Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի համար

— Ի՞նչ երգեր գիտես:

— Ինչ ասես գիտեմ, հայերեն, տաճկերեն, եկեղեցական, աշխարհական:

— Շատ լավ, «Լույս զվարթը» գիտե՞ս:

— Գիտեմ:

«Լույս զվարթը» երգելիս նկատեցի, թե ինչպես նրա աչքից արցունքները գլորվում էին և թավալվելով երկար ճերմակ մորուսի վրայով՝ գլորվում էին վերարկուի ծալքերի մեջ:

— Ասոր ճեմարան տարեք,— հրամայեց Վեհը Մանկունի Վահրամ եպիսկոպոսին՝ իր դիվանապետին....

Ճեմարան մտած օրից երգիչ և Մայր Աթոռի աչքի ընկնող ձայնեղ մանուկներից մեկն էի: Երբ Գևորգ Դ կաթողիկոսն իջնում էր վեհարանից Մայր տաճար, ես և իմ ձայնեղ ընկերս կանգնում էինք Նորա աթոռի մոտ և այնպես երգում միայնակները»:

Կոմիտաս

* * *

«Եթե ես կյանքումս որևէ մի լավ բան եմ արել հայ ժողովրդի համար, այդ ամենը պարտական եմ ճեմարանին, ուր կազմավորվեց իմ նկարագիրը, ուր ես կարողացա խորացնել իմ մտավոր զարգացումը, ձեռք բերել սեփական աշխարհայացք, լայնացնել մտքիս հորիզոնը.... Եթե նկատի ունենանք դասախոսների որակյալ կազմը, այլև հարուստ մատենադարանը և առատ ընթերցանությունը, հասկանալի կլինի, որ ճեմարանի լսարաններից դուրս էին գալիս բազմակողմանի և խորունկ զարգացման տեր երիտասարդներ, որոնց համար գործը ապահովված էր հայ մշակույթի, կրթական և հասարակական ասպարեզներում»:

Սիմոն Վրացյան

* * *

«Էջմիածնի ճեմարանն իբր գերազանցապես ազգային հղացում այնքան կախարդիչ է իր գեղեցկությամբ և այնպես հարուստ իր բովանդակությամբ, որ միանգամայն բավական է իր երախտավոր հիմնադրի անունը հավերժացնելու ժամանակակից հայ պատմության էջերում: ➥ էջ 6

Գևորգյան հոգևոր ճեմարան — 150

Հարցազրույց Գևորգյան հոգևոր ճեմարանի շրջանավարտ և դասախոս Տ. Արարատ քհն. Պողոսյանի հետ

— Գևորգյան հոգևոր ճեմարանը Հայաստանում հիմնված և մինչ օրս գործող ամենահին՝ 150-ամյա բարձրագույն ուսումնական հաստատությունն է՝ ծանրակշիռ ժառանգությամբ: Հիմնադրման պահից այն դարձավ հայության, առավելապես արևելահայ գիտակրթական, հոգևոր-մշակութային, նաև ազատագրական պայքարի գաղափարաբանության կենտրոն, ազգային ներուժի ձևավորման յուրատեսակ չափանիշ: Տեր Արարատ, արդի անկայուն, բազմաբարդ ժամանակներում ո՞րն է ճեմարանի հիմնական ուղերձը Հայաստանին, հայությանը և առհասարակ լուսավորչական աշխարհին:

— Չափազանց ուրախ ենք մեզ հարցազրույցի հրավիրելու համար, քանի որ Գևորգյան ճեմարանը յուրաքանչյուր ճեմարանավարտիս համար սրբազան, նվիրական մի վայր է, որտեղ մենք կայացել ենք իբրև հոգևորականներ: Ինչպես հիմնադրման շրջանում, այնպես էլ այսօր ճեմարանի առաքելությունն անշեղորեն նույնն է՝ պատրաստել բանիմաց, գիտելիքներով զինված, Քրիստոսի հոգենորոգ լույսը կրող եկեղեցականների, որոնք, ինչպես նշեցիք, արդի անկայուն ու բազմաբարդ ժամանակներում կկարողանան հաստատուն առաջ ընթանալ՝ իրենց հետ տանելով մեր Եկեղեցու զավակներին: Իսկ մասնագիտական բարձր պատրաստականությամբ և քրիստոնյա հոգեկերտվածքով հոգևորականների պատրաստումն ինքնին ենթադրում է Հայ Եկեղեցու սրբազան առաքելության շարունակության ապահովում՝ թե ազգային և թե համաքրիստոնեական առումով:

— Իր հիմնադրման օրից սկսած՝ ճեմարանն ունեցել է դասախոսական և տեսչական պատկառելի կազմ: Որքանո՞վ է հնարավոր այսօր պահել այդ ցուցանիշը:

— Ճեմարանը և ճեմարանականները միշտ եղել և մնում են Հայոց Հայրապետների ուշադրության կենտրոնում: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ևս բարձրագույն պատասխանատվությամբ է վերաբերվում ճեմարանական խնդիրներին՝ մանավանդ գիտակրթական անհրաժեշտ մակարդակի ապահովմանը, և այդ համատեքստում այսօր նույնպես կարևորվում է դասախոսական համակազմի ընտրության խնդիրը՝ որպես կրթության համակարգի որակի ապահովման առաջնային բաղադրատարր: Նաև պետք է առանձնանշեմ, որ տեսուչները ևս նշանակվում են կրթական գործում զգալի փորձառության և գիտական ավանդի սկզբունքով:

Ճեմարանում դասախոսության են հրավիրվում մեր ժամանակի լավագույն մասնագետները. դասախոսում են թե հոգևորականներ, թե աշխարհականներ: Ուրախությամբ պետք է շեշտեմ այն հանգամանքը, որ որոշ ճեմարանավարտ եկեղեցականներ դառնում են ժամանակին իրենց կրթած, գիտելիք շնորհած հաստատության դասախոսներ՝ իրենք էլ իրենց հերթին շարունակելով եկեղեցապարգև այդ առաքելությունը:

— Տե՛ր Արարատ, ինչո՞վ է տարբերվում ճեմարանականը աշխարհիկ բուհի ուսանողից: Գիտակրթական, բարոյադաստիարակչական, վարքաբանական ի՞նչ առանձնահատկություններ են բնորոշ ճեմարանականին:

— Ճեմարանը, լինելով հոգևոր-կրթական հաստատություն, իր անջնջելի հետքն է թողնում յուրաքանչյուր սանի հոգեկերտվածքի վրա: Ճեմարանականի առօրյան տարբերվում է ցանկացած աշխարհիկ բուհի ուսանողի առօրյայից: Ուսումնառությունից և սերտողությունից զատ՝ ճեմարանականի կյանքում ուրույն տեղ ունեն ժամերգություններն ու կիրակնօրյա սուրբ պատարագը, որոնք նույնպես ճեմարանականին ինքնաքննելու և հոգեպես կատարելագործվելու լավագույն հնարավորություն են ընձեռում: Կառանձնացնեմ նաև տեսչական, դասախոսական կազմի անդուլ աշխատանքը, որոնց բծախնդիր աշխատանքի շնորհիվ ունենում ենք գիտելիքներով հարուստ ճեմարանականներ: Կարող ենք փաստել, որ ճեմարանը մտքի և հոգու դարբնոց է, և ճեմարանականներին բնորոշ են ուսումնատենչությունը, սկզբունքայնությունը, կանոնապահությունը, ճշմարտախոսությունն ու արդարամտությունը և շատ կարևոր այլ հատկանիշներ, որոնք ապագա հոգևորականի բարոյատիպն են ամբողջացնում: Այլ կերպ ասած՝ Գևորգյան ճեմարանը յուրահատուկ համալսարան է, որից ճառագող լույսի առաջ պետք է չքանա խավարը, խորտակվեն հետադիմության արմատները, անհետանան մոլությունն ու տգիտությունը և այլն:

— Ճեմարանի կրթագիտական պատմության մեջ ուսումն արտասահմանում՝ մասնավորապես Եվրոպայում շարունակելը ռազմավարական կարևոր ուղղություններից էր: Այս և բովանդակային այլ առումներով ի՞նչ է պահպանվել կամ փոխվել ճեմարանի կրթական ռազմավարության մեջ:

— Ճեմարանի հիմնադրումից կարճ ժամանակ անց, ինչպես հայտնի է, կարևորվեց շրջանավարտներին ուղարկել Եվրոպա՝ շարունակելու ուսումը, որպեսզի համադրեն ազգային և եվրոպական փորձը և հետ չմնան ժամանակի աստվածաբանական մտքի զարգացման ընթացքից: Այսօր էլ շարունակվում է այս ռազմավարությունը, և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի քսանհինգամյա հայրապետության շրջանում տասնյակ հոգևորականներ մեկնել են արտերկիր՝ Եվրոպայի և Ամերիկայի լավագույն համալսարաններում ուսումը շարունակելու կամ վերապատրաստվելու: Վերադառնալով՝ նրանք ծառայում են մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում՝ իրենց ստացած գիտելիքները և փորձառությունը ծառայեցնելով ի շահ Հայ Եկեղեցու և հայրենիքի:



— Որքան տեղյակ եմ, ճեմարանն իր առաջին շրջանավարտները տվել է 1882—1883 ուստարում, և նրանցից ոչ մեկը ցանկություն չի հայտնել հոգևորական դառնալու: Ինչպիսի՞ն է այսօրվա պատկերը:

— Ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի համար այդ հարցը խոր մտահոգության առիթ էր: Երանաշնորհ Հայրապետն անգամ չտեսավ իր ցանած բերքը, չվայելեց հոգնատանջ աշխատանքի արդյունքը: Հաջորդ Հայրապետի՝ Մակար Ա Թեղուտցու գահակալության առաջին տարիներին ևս վիճակը մնաց անփոփոխ, դրա համար էլ նա Սուրբ Էջմիածին հրավիրեց Կարինի թեմի առաջնորդ, բազմագիտակ աստվածաբան Մաղաքիա վրդ. Օրմանյանին: Վերջինիս կարճատև դասավանդմամբ ճեմարանի պատմության մեջ նոր էջ բացվեց, քանի որ մինչև Օրմանյան սրբազանի գալը՝ ճեմարանում աստվածաբանական և կրոնագիտական առարկաների ուսուցումը գերազանց, գոհացուցիչ չափով չէր իրականացվում: Նա դասախոսություններ վարեց 1887-ի սեպտեմբերից մինչև 1888-ի հուլիս, և չնայած այդ կարճ ընթացքին՝ նրա ջանքերն իզուր չանցան: 1889 թ. հունիսի 17-ին Ս. Գայանե վանքում սարկավագական ձեռնադրության արժանացան ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանը, ճեմարանականներ Կարապետ Տեր-Մկրտչյանը, Գևորգ Չորեքչյանը և Գարեգին Հովսեփյանը: Իսկ ավելի ուշ՝ 1894 թ. սեպտեմբերին, Մկրտիչ Ա Խրիմյան Կաթողիկոսի օրհնությամբ վեց ճեմարանավարտ սարկավագ առաջին անգամ ձեռնադրվեց կուսակրոն քահանա՝ դառնալով Հայոց Եկեղեցու, մշակույթի ու գիտության նշանավոր գործիչ: Այդպիսով՝ կարող ենք ասել, որ ի վերջո իրականացավ ճեմարանի հիմնադիր Գևորդ Դ Հայրապետի նպատակը:

Այսօր էլ, հավատարիմ նախնյաց ավանդույթին, ճեմարանավարտ եկեղեցականների մեծագույն մասն իր ծառայությունն է բերում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում՝ շարունակելով հավատարիմ մնալ ճեմարանի իրական առաքելությանը:

— Ճեմարանական հիմնի առաջին տողը, թերևս ինձ համար, ամենաարժեքավոր գաղափարն է՝ «Մեծ տեսիլքի մենք զավակներ»... Որքանո՞վ է ճեմարանը Ձեզ անձամբ դարձրել մեծ տեսիլքի զավակ:

— Յուրաքանչյուր հայ քրիստոնյա մեր հավատքի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի զավակն է, իսկ յուրաքանչյուր հոգևորական այդ հավատքի և տեսիլքի պաշտպանն է: Նախնյաց հավատքի և ազգային արժեքների պաշտպանությունը, որին իր կյանքն է նվիրում հայ հոգևորականը, նրան ինքնին դարձնում է «մեծ տեսիլքի զավակ»... «Լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է» (Ել. Գ. 5). այս զգացումով պետք է վերաբերվել նաև Գևորգյան հոգևոր ճեմարանին՝ լուսո այդ տաճարին: Այո՛, գլուխ պետք է խոնարհել, բոկոտն պետք է այցելել այն վայր, որը Հայաստանյայց Եկեղեցու, այսպես ասած, ճարտարապետական համալիրում գիտության գավիթ է կամ ընդունարան: Այս զգացումը պետք է ունենա յուրաքանչյուրը՝ տեսչության անդամը, դասախոսը, սանը, այս զգացումը պետք է ունենա ամեն մի հայ՝ հեռավոր թե մերձակա, որ ոտք է դնում Ս. Էջմիածնի այդ նվիրական կաճառը:

Տեղին և խիստ արդիական ենք համարում այս հարցազրույցի շրջանակներում հրապարակել Կարապետ սարկավագ Տեր-Մկրտչյանի (հետագայում՝ եպիսկոպոս) ճառը՝ խոսված Խաչվերացի տոնին Գևորգ Դ Հայրապետի շիրիմի առջև (11.09.1884):

— Միով բանիվ՝ Գևորգյան հոգևոր ճեմարանը մեր ազգային ու եկեղեցական կյանքում ուխտի տապանակ է: Թող Աստված պահպանի և առավել զորացնի ճեմարանի լուսաստիյուռ, նվիրական հարկը:

Շնորհակալություն հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝ Անուշ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ

Կարապետ սարկաւագի ճառը

Շիրիմ, որ մեր բարերար հօր նշխարներն ես ամփոփում. ահիւ և դողութեամբ ենք մօտենում քեզ՝ այս վճռական, խորհրդաւոր պահուն կրկնելու և երեքկնելու մեր ուխտը՝ ուխտ սրբազան հաւատարմութեան և անքակտելի հաստատութեան, դու մեզ վստահութիւն ներշնչիր՝ մեծ-մեծ պարտքերի մի այսպիսի ծանր լուծ քաղցր հեշտութեամբ մեր վերայ առնելու: Անձկալից սրտով քեզ ենք կանչում, Վեհի՛ն Գէորգայ պանծալի անուն, որ ոսկեղէն տառերով մեր կրթութեան դրօշակի վերայ մակագրած՝ տարիներէ ի վեր մեզ ոգևորել՝ ուղղութեան ճանապարհով մինչև այս կէտն ես առաջնորդել, դու և այժմ կնիք եղեր մեր ուխտի համար՝ արթուն յուշարար մնալով կեանքի ամեն քայլափոխումս, թէ որոյ ոգւոյ ենք մենք զաւակ. այդ անուամբ զուարթանանք տագնապի րոպէում. այդ անունից երկնչենք, երբ փորձանաց դևը գայթակղութեան կամ թուլութեան որոգայթ մեր առաջը լարէ, և ո՞վ է այն չուառականը, որ սրբութեան քօղը կրել համարձակելով՝ այդ անուան արատ բերելուց պիտի չփախչէ:

Այժմ, հա՛յր, որ անշուշտ դիտում ես երջանիկների կայանքից մեր այս գումարումը, թող խաղաղեն բազմաշխատ գործերդ, փափագներդ լեցուած են. հեռատես խորհուրդներդ՝ կատարումն ընդունած. քո մեծ գործին արդիւնք, բազմապատիկ խնամոցդ տրիտուր, ահա Տիրոջ սեղանի առաջ ենք դնում մեր սրտերը, մեր հոգին, մեր ամբողջ կարողութիւնը, Նորան լինի ամենը՝ Նորա տան սպասաւորութեան սուրբ գործին նուիրած: Տկար են արդարև ու տարուբեր մեր սրտերն ու հոգին, յողդողդ՝ մեր մտքերը, անհաստատ՝ մեր կամքը. ըստ ամենայնի դուզնաքեայ է և անարժան թերևս մեր այս նուէր, սակայն ամենայն յօժարութեամբ բերած. օրհնի՛ր մեր ուխտը և բարեխօս եղիր Նորա առաջ, որ ոչինչը ինչ դարձնել կարող է, տկարը զօգացնել, անարժանը նուիրագործել և արժանի կացուցանել. Նա՛ տայ մեզ կարողութիւն սրբութեամբ սկսելու և կատարելու:

Հայաստանեայցս Սրբազնագոյն Հովուապետի, մեր մեծագոյն Հայրապետաց արժանընտիր յաջորդի ձեռն ենք յանձնում մեր այս սրբազան ուխտի կնիքը՝ կրկնելով իւր առաջ ուխտ մտադիւր հնազանդութեան. նա, որ տէր է ցպով և գաւազանաւ առաջնորդելու մեր սպասաւորութեան գործին, այլ որի աջ ու աչք գորովագութ հայր են խոստանում ամենքին: Անկեալ է նա և անհաղորդ՝ մեր սրբազան ուխտին, որ այդ հայրական գթոյն Վեհութիւնը գնահատել չի իմանայ և կմոռանայ երբէք կամակոր հպատակութեամբ պատրաստ գտնուել մեր Հոգևոր Տիրոջ մէն մի հրամանին: Հայոց Հայրիկը, որ ասես մեր երջանիկ նախնեաց շարքից է իջել, հայ կրօնաւորի տիպարը կենդանի օրինակաւ մեր առաջը նկարելու. որի սիրտը միշտ վառ է եղել հայ անուան սիրոյ կրակով, որի բերանում միշտ կենդանի է եղել Սուրբ Աւետարանի ճշմարտութեան խօսքը, նա թո՛ղ ներշնչէ մեզ այն հոգին, որ մարդկանց հոգիները սիրով կապել, ճշմարտութեամբ ղեկավարել գիտէ: Անտէր ազգի հոգսերու ու վշտերի ծանրութեան ներքոյ ճերմկացած ալիք մեր երիտասարդական անձնապաստանութիւնը մինչև գետին է խոնարհում Ձեր պատկառելի վսեմութեան առաջ, Ձեզ ենք կամենում հետևել հեզ և խոնարհ սրտով, անբասիր ու բարեբեր մի կենաց առաջնորդ մեզ եղէք:

Օրհնեցէք մեզ և դուք, սրբազան հայրե՛ր, Ս. Էջմիածնի հնօրեայ միաբանութիւն, ներկայացուցիչ փառաւոր անցեալի և պահապան աւանդական սրբութեանց, որ այսօր կրկին նուիրագործութեամբ ի շարս ձեր դնել յօժարումէք մեր տհաս ոգիքը. ձեր առաջ ենք երեքկնում մեր ուխտը. յարգել անցեալը, ճշմարտութեամբ պահել նուիրական աւանդութիւնները, խոնարհել այն ամեն սրբութեան առաջ, որ մեր պաշտելի նախնեաց անուան ու գործի դրոշմն է կրում. օրհնեցէ՛ք և աղօթեցէ՛ք, որ այդ հայրերի շաւղովն ընթանալ նոր ուժով, հին, բայց և միշտ նոր, կենդանի, հարազատ և կենդանարար ոգին արծարծել կարող լինենք:

Հապա դո՛ւ, Հայոց ժողովուրդ, որ այդպէս հետաքրքիր աչքերով դիտում ես մեզ և պիտ շարունակես դիտել ու քննել մեր իւրաքանչիւր քայլափոխը. որ անտուն-անտէր գաղթականից սկսած մինչև ճոխ պալատների մէջ զուարճացող մեծատունը թշուառութեանց ու մոլորութիւնների մի ծով ես ներկայացնում, բռնում ես անհամար վերքեր, որոնց սպեղանի, վշտեր, որոնց սփոփում պէտք է, և մատով ցոյց ես տալիս. ահա՛ մեր հովիւներն ու վարդապետները. ➥ էջ 8

Հրաչյա Աճառյան. Հուշեր Կոմիտասի մասին

Կոմիտաս — 155

1899 թվականեն սկսյալ, երեք տարի շարունակաբար Կոմիտասին հետ պաշտոնավարած ենք Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Այդ ժամանակամիջոցին կապրեինք նույն սենյակին մեջ: Երեք տարի Կոմիտասին հետ օր ու գիշեր նույն երդիկին տակ ապրելով՝ մոտեն ճանչցա անոր նկարագրի գծերը.... Կոմիտաս մարդկային բացառիկ առաքինություններու ծով էր: Չափազանց աշխատասեր, աննկուն կամքի տեր, անկեղծ, բարեհոգի, ընկերասեր, քաղցր և համեստ՝ ամենուն նկատմամբ: Մաքրակրոն էր ան և մեծ հայրենասեր մը: Բացի իր երաժշտական հանճարեն, քովնտի շնորհքներ ալ ուներ. բանաստեղծ էր և ճարտար կոմիկ դերասան մը, որ ֆարսի մեջ ալ մեզ հայտնի էր: Վերին աստիճան սրամիտ, կենսուրախ և պատրաստաբան էր Կոմիտաս և սիրված ճեմարանի մեծեն ու փոքրեն: Կոմիտաս բացառիկ դուրեկան ձայն մը ուներ և արժանացած էր Խրիմյան Հայրիկի մասնավոր համակրանքին, Խրիմյան Հայրիկի կարգադրությամբ, տոնական օրերը Կոմիտասը կղեկավարեր դպրաց դասը և պատասխանատու էր խորանեն երգված սաղմոսերգություններու և ավետարաններու ընթերցման:

Անգամ մը Ս. Գևորգի տոնին՝ պատարագեն վերջ, օրվան մեղեդիները Կոմիտասին կողմե այնքան անուշ երգվելուն համար Հայրիկը անձամբ ուզեց հայտնել իր գոհունակությունը Կոմիտասին. շտապ կանչեց իր մոտ և կուզեր, որ այդ օրը իրեն հետ սեղանակից ըլլար ան:

Մեծ էր, անշուշտ, կաթողիկոսի հրամանը: Ճեմարանի ուսուցիչ և ուսանող աջ ու ձախ ինկանք Կոմիտասը շտապ գտնելու համար.... Այդ օրը հավաքված էին Հայաստանի շրջաններեն հազարավոր ուխտավորներ, որոնք, ավանդական սովորության համաձայն, խնջույքի սեղաններ բացած, կզվարճանային՝ ժողովրդական երգի ու պարի, դահուլի ու զուռնայի աղաղակներով լեցնելով օդը:



Կոմիտասը Գևորգյան ճեմարանի սաների հետ. 1890—1891 թթ.

Կոմիտասի անհայտանալուն լուրը հասավ Վեհափառին.... Այդ օրը ուշ երեկո էր, երբ Կոմիտասը ճեմարանի կտուրեն իջնելով մտավ մեր սենյակը և ուրախության բացականչություններով ցույց տվավ օրվա իր հավաքած ժողովրդական երգերն ու պարերգերը, որոնք նոտագրած էր հայկական ձայնանիշերով: Երբ քանի մը րոպե վերջ Վեհափառի մոտ գացինք, վրդովված էր Հայրիկը:

Կոմիտաս ծունկի եկավ անոր առջև և աջը առնելով ըսավ. «Եթե վեհդ ցանկանա՝ մեղքս շատ շուտ կքավվեմ՝ հիմա իսկ երգելով այսօրվան հավաքած հայկական ժողովրդական երգերեն և պարերգերեն»:

Եվ Խրիմյան Հայրիկի ներողամիտ հայացքին տակ՝ Կոմիտաս երգեց իր նոտագրած երգերեն: Այդ օրվընե վերջ, Խրիմյան Հայրիկի հրամանով՝ ամեն տաղավարներու, պատարագեն վերջ Կոմիտաս ազատորեն կշրջեր և կհավաքեր հայ ժողովրդի երաժշտության գանձերը:

Կոմիտաս մեծ ընթերցասեր մըն էր, ուժեղ էր հայոց լեզվի մեջ և հայոց պատմությունը շատ լավ գիտեր: Մասնավորապես կկարդար Մովսես Խորենացին և Նարեկացին, իսկ Աբովյանին «Վերք Հայաստանին» կանվաներ իր մասունքը: Կպատմեր, որ իր ուսանողական տարիներեն ան ընտրած էր իր կյանքի ուղին: Ան հաճախ կըսեր, որ «Երաժշտական չոր մասնագիտությունը ոչ մի բավարարություն չի ներկայացներ իրեն, իր միակ փափագը խորանալն է անոր մեջ»: Միշտ կըսեր, որ ժողովրդական բանահյուսությունը իր հոգվույն մեջ զուգընթաց էր ժողովրդական երաժշտության հետ: Եվ կավելցներ վստահ շեշտով մը. «Ես պիտի հասնիմ իմ բուն նպատակին և մեր հայ ժողովրդական երաժշտության գանձերը դուրս պիտի բերեմ հայրենի ավերակներեն...»:

Կոմիտաս քաջ պարող մըն ալ էր, միևնույն ատեն կատակերգակ դերասանի հակումներ ուներ. ձևեր և բարբառներ հարազատորեն ընդօրինակելու բացառիկ շնորհք ուներ: Ճեմարանի մեր մտերմական հավաքույթներուն որքա՜ն հաճելի էր մեզ, երբ ան, մեր խնդրանքին վրա, իր ծննդավայրեն սորված թրքական պարերը թե՛ կերգեր, թե՛ կպարեր, և մենք ծափերով կոգևորեինք իր մատներուն շխշկոցները՝ իր բազմաձև ճոճումներուն մեջ:

Ճեմարանի ուսուցիչներուն մեջ հայտնի ժողովրդական պարողն էր: Տղամարդկանց խիզախ, խրոխտ շորորեն, ծանր ճոճումներով և մարտական սուրով պարերեն մինչև շինական կանանց պարերը՝ իրենց ձայնի հարազատ ելևէջներով և մարմնի ու ձեռքերու նուրբ արտահայտություններով, առհավետ անմոռանալի կմնան:

Կոմիտաս շատ կսիրեր ազատ ժամերուն երկար զբոսնել բացօթյա դաշտերուն մեջ և կըսեր. «Ես սակավ ուտելիքով կապրիմ, բայց առանց օդ ծծելու՝ երբեք. իմ առաջին սնունդը ազատ օդի մեջ զբոսնելն է»:

Կոմիտաս բծախնդիր էր մաքրության: Անոր թխորակ դեմքը, սեփսև մազերը մաքրության մեջ միշտ կփայլեին: Մեծ խնամք կտաներ իր հագուստներուն մաքրությանը:

Երկար ժամեր ճամփորդելե վերջ, երբ կվերադառնայինք փոշեթաթախ վիճակով, ան մինչև բոլորովին չմաքրվեր՝ չէր կրնար ճաշել, նույնիսկ ամենաքաղցած վիճակին մեջ:

Կոմիտաս օր մը ինծի ըսավ. «Հայկական 50 հատ խազ կա: Ես կկարծեմ, որ հայոց ձայնանիշը քանի մը ձայն կպարունակե իր մեջ», և ուրախությամբ վրա բերավ. «Ես գաղտնիքը գտեր եմ...»:

* * *

Կոմիտասի ձայնը մեծ դիապազոն ուներ: Բեռլին գտնված միջոցին հայ ժողովրդական երգերը անձնապես ցուցադրած համերգեն վերջ Բեռլինի օպերայի տնօրենը անձամբ կհրավիրե զինքը իբրև օպերայի գլխավոր երգիչ և կխոստանա բացառիկ վճարում:

Կոմիտասը կպատասխանե անոր. «Իմ երգչի կարողությունները մեկ նպատակի միայն կծառայեն՝ մեծ ժողովուրդիս երգն ու երաժշտությունը ծանոթացնել երաժշտական աշխարհին և ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդը սկզբնական դարերեն ունեցեր է իր ինքնուրույն երգն ու երաժշտությունը»:

Նյութի աղբյուրը՝ «Կյանքիս հուշերից», Երևան, ԵՊՀ-ի հրատ., 1967 թ.

Հուշեր և փաստեր Գևորգյան ճեմարանից

➥ էջ 4

Ճեմարանը մի լոկ կրթական հաստատություն չէ, հայ ժողովրդի քաղաքական ու ազգային կենսական շահերի լիակատար և ճշգրիտ ըմբռնումի արդյունք է այն....

Ճեմարանի դռները միշտ լայնորեն բաց եղան հայ ժողովրդի ամենեն խոնարհ խավերի զավակների առջև և հաճախ այնպիսի խորշերից, ուր դարերից ի վեր ուսման և քաղաքակրթության լույսը չէր թափանցել: Միակ պայմանն էր, որ ընտրված տղաները լինեին ուշիմ, ժիր, ընդունակ, ջանասեր ու առաքինի: Եվ այդպիսիներին ընտրելու համար հատուկ նվիրակներ մեկնեցին Էջմիածնից դեպի մեր հեռավոր գավառները, և ամենեն զգաստ, խելացի, աչքաբաց մանուկները առաջնորդվեցին ճեմարան: Եվ ինչ որ ամենեն նշանակալիցն է, ճեմարանի աշակերտը ազատ է որևէ նյութական հոգսից: Ութ-ինը տարի նա կարող է սովորել ու ապրել գիշերօթիկ այս բարձր վարժարանում միանգամայն անվարձ: Ամեն տղա ազգի զավակն է և ազգի թոշակավորը....

Տարիներ հետո հասունացած ու զարգացած աշակերտը խորապես զգում ու գիտակցում էր, թե ինքն այլևս այսինչ գյուղի, այսինչ գյուղացու զավակը չէ, այլ ազգի զավակը և ծանր ու գեղեցիկ պարտք ունի հանդեպ հայ հանրության:

Եվ այսպիսով համազգային ճեմարանից ելնում էին համազգային ընտիր քաղաքացիներ....

Ճեմարանը Հայոց աշխարհի տնկարանն էր, Հայաստանի մի մանրանկարը....

Մոտ կես դար տևող իր գոյության ընթացքին ճեմարանը, ինչպես մի վիթխարի մտավոր հնոց, ինչ շքեղ գոյություններ դարբնեց, ինչ սքանչելի տղաներ շպրտեց հայրենական փշոտ ասպարեզները՝ ի սպաս տառապող ու լույսի կարոտ մեր ժողովրդի....

Ո՞ր մեկը հիշեմ, որոնք մի օր ճեմարանի դռնից ներս մտան որպես ողջակիզի նոխազներ, անմռունչ ու հնազանդ, ապա տարիներ հետո բոց ու կրակ կտրած՝ մրրկաշունչ խոյանքով դուրս նետվեցին դեպի տառապող հայրենիքը: Եվ քանի-քանի կայծակնափայլ աչքեր փակվեցին հավիտենականության համար:

Ինչ եղան, ո՞ւր ընկան, ինչպե՞ս ընկան....

Հապա գիտության, արվեստի, ուսուցչական, գրական, զինվորական և հոգևոր ասպարեզներում քանի-քանի կարկառուն դեմքեր հայ անունը, գիրն ու արվեստը փառավորեցին ճեմարանից ստացած հայրենապաշտ հզոր մղումով....»:

Ավետիս Ահարոնյան

* * *

«Եվ ահա Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սան եմ: Այդ բախտը լցնում է սիրտս խորին ուրախությամբ: Ոչ միայն ուրախ եմ, այլև հպարտ: Այստեղ են ուսանել Կոմիտասը, Շանթը, Ավետիք Իսահակյանը և շատ ուրիշ անվանի մարդիկ:

Ես երջանիկ եմ...»:

Մկրտիչ Խերանյան

* * *

Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը ճեմարանականներին, 1957 թ.

«Դուք պետք է գիտություն ամբարեք անհագ ծարավով և սիրով, մանավանդ երեք ուղղությամբ պետք է լավ զինվեք՝ ա. սրբազան գիտելիքներով, բ. հայերենով, գ. հայ ժողովրդի պատմությամբ.... Հայոց պատմությունը ճեմարանցիի համար պետք է ըլլա երկրորդ Ավետարան: Տարիներ հետո, երբ դուք քարոզեք մեր ժողովրդին, ձեր մեկ ձեռքին պետք է ունենաք Հիսուսի Ավետարանը, իսկ մյուս ձեռքին՝ հայոց պատմության գիրքը:

* * *

Շրջաբերական հրահանգ

Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանական լրիվ դասընթացքն ավարտողը հայագիտական առարկաների (հայ լեզվի, հայոց գրականության, հայոց պատմության, Հայաստանի աշխարհագրության և կրոնի) նկատմամբ համարվում է բարձրագույն դպրոց ավարտած:

Էջմիածնի լսարանական լրիվ դասընթացքն ավարտած անձինք ոչ հայկական առարկաների և վարչական պաշտոնների նկատմամբ համարվում են նույնիրավ ուսուցչական ինստիտուտն ավարտողներին:

Այն անձինք, որ բարձրագույն դպրոցում լսել են առնվազն չորս սեմեստր և քննություն են տվել լսած առարկաներից, ինչպես և նրանք, որ լսել են առնվազն վեց սեմեստր, բայց քննություն չեն տվել, համարվում են նույնիրավ ուսուցչական ինստիտուտն ավարտողներին:

Հանրային կրթության և արվեստի մինիստր՝ Ն. Աղբալյան

* * *

Ավետիք Իսահակյանի խնդրագիրը Ս. Էջմիածնի Սինոդին

Նորին բարձր Սրբազնության
Երեմիա եպիսկոպոսի տեղակալին
Ատենապետի Ս. Սինոդի

Խնդիր.

Անկասկած հայտնի կլինին Ձերդ Սրբազնությանը ճեմարանի աղմկալի խռովությունները, որոնք շատերի արձակման պատճառ եղան: Հայտնի կլինին նույնպես, որ այդ աշակերտներին ճեմարանից հեռացնողը նույն տեղի շնորհունակ սարկավագների անտեղի կասկածներն էին, որոնք յուրյանց ժամանակում մեծ գին ունեին վարչության աչքին:

Ես՝ ճեմարանի Դ դասարանի սաներից մեկը, ինքնաստեղծ կասկածներին ենթարկվելուց վախենալով, վաղօրոք թողի հուզված ճեմարանը, միակ օրինավոր վկայականից չզրկվելու համար: Բայց որովհետև այժմ ճեմարանը բարեխնամ հոգատարներիդ՝ Ձերդ Գերապատվության և Սրբազան Տեսչի հսկողությամբ ազատ է խռովություններից, ուստի ուսանելու ջերմ ցանկությամբ դիմում եմ Ձերդ ողորմածությանը՝ ճեմարանի մայրագույթ որդեգրությունը խնդրելով:

Ձերդ Սրբազնության խոնարհ որդի
Ավետիք Իսահակյան
1891 թ. 1 օգոստոսի
Վաղարշապատ

* * *

Ակսել Բակունցին Գևորգյան ճեմարան ընդունելու՝ Գորիսի 152 երևելիների խնդրագիրը Մատթեոս Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին

Մեր համաքաղաքացի Ստեփան Թևոսյանը, ծանրաբեռնված լինելով բազմանդամ ընտանիքով, անզոր է և չունի որևէ նյութական միջոց յուր որդոց կրթության մասին հոգալու:

Նրա որդիներից մեկը՝ Աղեքսանդր Թևոսյանը, մինչև օրս ուսել է տեղվույս ծխական դպրոցում ձրիաբար և ամենագովելի ու առանձնահատուկ ընդունակությամբ ավարտել է հիշյալ դպրոցը:

Արդ որդիական վստահությամբ դիմելով Ձերդ Վեհափառության՝ խոնարհաբար խնդրում ենք Ձեր հայրական խնամքը վայելող հոգևոր ճեմարանի գիշերօթիկ սաների շարքում ընդունել հիշյալ աշակերտին:

Այլև հիշելու է, որ ամբողջ Տաթևի լայնատարած վիճակից ներկայումս միայն մի ուսանող ունի ճեմարանը, որը և շուտով ավարտելու է:

Արժանանալով Ձերդ Վեհափառության սրբազան ուշադրությանը՝ հուսանք, որ մեր խնդիրը անկատար չի մնա Ձերդ սրբության կողմից:

Առ որ մնամք Ձերդ Սուրբ Օծության Սրբազնագույն աջը համբուրող ամենախոնարհ որդիք:

Նյութի հիմնական աղբյուրը՝ «Նշանավոր ճեմարանականներ», հտ. Ա, Բ, Ս. Էջմիածին, 2005, 2009 թթ.

Գևորգ Չորեքչյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեությունը

Մահվան 70-րդ տարելիցի առթիվ

«Մենք բոլորս քրիստոնեայ եղբայրներ, Աստուծոյ ծառաներ ենք, Տիրոջ մեծ պարտէզի մշակները: Երանի նրան, ով մեզնից իւր կեանքի երեկոյին կլսէ Տիրոջ մխիթարիչ բառերը, թէ՝ «Ծառայ բարի եւ հաւատարիմ, մուտ յուրախութիւն Տեառն քո», և յանձնելով իւր մարմինը հողին, որին պատկանում է, կերթայ լուսոյ օթևանները, ուսկից եկել է»:

Գևորգ Չ Չորեքչյան

Գևորգ Չ Չորեքչյան Հայրապետը ծնվել է 1868 թ. Նոր Նախիջևանում: Սովորել է Գևորգյան հոգևոր ճեմարանում և 1889 թ. ձեռնադրվել սարկավագ: Ապա Մակար Ա Թեղուտցի Հայրապետի օրհնությամբ ուսանում է Լայպցիգի համալսարանում, իսկ մեկ տարի պատրաստվելուց հետո՝ նույն քաղաքի կոնսերվատորիայում: Վերադառնալով հայրենիք՝ դասավանդում է Գևորգյան ճեմարանում երաժշտություն և Հայ Եկեղեցու պատմություն՝ միաժամանակ ղեկավարելով ճեմարանի երգչախումբը: Մեկ տարի անց մեկնում է ծննդավայր՝ Նոր Նախիջևան՝ պաշտոնավարելու Սուրբ Խաչ վանքում, որտեղ մնում է 18 տարի:

Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսը, ընդառաջելով Նոր Նախիջևանի հայ համայնքի խնդրանքին, 1913 թ. հունիսի 20-ին Գևորգ սարկավագին ձեռնադրում է աբեղա, իսկ երեք օր անց նա ստանում է վարդապետական աստիճան: Ապա նշանակվում է Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական փոխանորդ: 1916 թ. Գևորգ Ե Կաթողիկոսը նրան կանչում է Սուրբ Էջմիածին և նշանակում Սուրբ Սինոդի անդամ: 1917 թ. ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան, ապա նույն թվականի ապրիլին արժանանում է եպիսկոպոսական օծման: 1921 թ. նշանակվում է Մայր տաճարի լուսարարապետ, իսկ 1922 թ. ընտրվում Վիրահայոց թեմի առաջնորդ: 1927 թ. վերադառնում է Մայր Աթոռ և ընտրվում Գերագույն հոգևոր խորհրդի անդամ: Խորեն Ա Մուրադբեկյան Հայրապետի կողմից 1936 թ. նշանակվում է հայրապետական փոխանորդ և նորից գործուղվում Վիրահայոց թեմ, որը «Ազատ եկեղեցականների» շարժման պատճառով քայքայված վիճակում էր:

Խորեն Կաթողիկոսի մահվանից հետո Գևորգ արք. Չորեքչյանն ստանձնում է Ամենայն Հայոց Հայրապետի տեղապահի պաշտոնը: 1941 թ. ապրիլի 10-ին Մայր Աթոռում հրավիրվում է Ազգային-եկեղեցական ժողով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության համար: Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով պատգամավորների թիվը փոքր էր, ժողովը հետաձգվում է, իսկ Գևորգ արք. Չորեքչյանն ընտրվում է Ամենայն Հայոց Հայրապետության տեղապահ. մինչև 1945 թվականն զբաղեցնում է այդ պաշտոնը:

Այդ շրջանում կրոնական հալածանքները, եկեղեցականների հանդեպ ծաղրալից վերաբերմունքը շարունակվում էին բուռն կերպով: Գևորգ արքեպիսկոպոսը բնակվում էր Երևանում, ամեն օր ավտոբուսով մեկնում էր Սուրբ Էջմիածին և հաճախ զոհ էր դառնում թուք ու մրի: Բայց հայրապետական տեղապահը բոլոր անարգանքները տարավ՝ վառ պահելու Լուսավորչի կանթեղը:

Ժամանակները ծանր էին, և հաճախ Սուրբ Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը գործիք էր դառնում պետության ձեռքում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սփյուռքահայության շրջանում կազմակերպում է հանգանակություն տանկային շարասյուներ ստեղծելու համար, ինչը դրական արձագանք է գտնում: Ստեղծվում են «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուները, ձեռք է բերվում քսան Տ–34 տանկ: Գևորգ Չորեքչյանի այս քայլը վճռորոշ դեր է խաղում ռազմաճակատում և Հայոց Եկեղեցի – ԽՍՀՄ հարաբերություններում: Պատերազմի ավարտից հետո Չորեքչյանը նամակ է հղում Ստալինին՝ Էջմիածնում կաթողիկոսի աթոռի վերականգնման խնդրով:

1945 թ. ապրիլի 19-ին Իոսիֆ Ստալինը Կրեմլում ընդունում է Գևորգ արքեպիսկոպոսին և խոստումներ տալիս կաթողիկոսական ընտրության, Մայր Աթոռի պաշտոնական ամսագրի հրատարակության, Գևորգյան ճեմարանի վերաբացման և այլ հարցերում: Գևորգ արքեպիսկոպոսի կողմից ճանապարհը հարթված էր. 1938 թվականից թափուր մնացած հայրապետական գահն ունենալու էր նոր գահակալ:

1945 թ. հունիսի 16-ին գումարվում է Ազգային-եկեղեցական ժողով, և Գևորգ արք. Չորեքչյանն ընտրվում է 129-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ 111 քվեներից ստանալով 110-ը: Նրա կաթողիկոսության օրոք վերազարթոնք են ապրում ԽՍՀՄ-ի տարածքում գտնվող Հայոց Եկեղեցու թեմերը, հրատարակվում է «Էջմիածին» ամսագիրը, վերաբացվում են Էջմիածնի հոգևոր ճեմարանը, տպարանը, վերադարձվում են ճեմարանի գրադարանը, վանքապատկան շենքերի մի մասը, ինչպես նաև՝ Ս. Հռիփսիմեն, Ս. Գեղարդավանքը և Խորվիրապը: Ինը տարվա գահակալության ընթացքում Գևորգ Չ Հայրապետը հասցնում է վերակազմակերպել Մայր Աթոռի ներքին և արտաքին թեմերը:

Գևորգ Չ-ի գործունեությունը կենտրոնանում է երկու կարևոր հարցերի շուրջ՝ ներգաղթի կազմակերպումը և հայ ժողովրդի հողային պահանջների հետապնդումը: Նա առանցքային խնդիր է համարել մայր հայրենիքի և սփյուռքահայության կապերի ամրապնդումը, մեծ ավանդ է ունեցել 1946–1948 թթ. հայրենադարձության կազմակերպման գործում: 1945 թ. ապրիլի 19-ին Մոսկվայում Ի. Ստալինի հետ հանդիպման ժամանակ բարձրացրել է Արևմտյան Հայաստանի հիմնախնդիրը, իսկ 1945 թ. հոկտեմբերի 25-ին կոնդակով դիմել է ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին՝ հայկական հողերը Թուրքիայից վերադարձնելու խնդրանքով: 1947 թ. ապրիլի 20-ին հրապարակել է ընդարձակ մի կոնդակ՝ «Հայկական հարցի լուծման մասին»: Ողջունել է 1947 թ. ապրիլին Նյու Յորքում գումարված Հայկական համաշխարհային վեհաժողովը, որի նպատակն էր վերստին արծարծել Թուրքիայի բռնագրաված հայկական տարածքների վերադարձման հարցը: Գևորգ Չ Հայրապետն ամեն ջանք գործադրել է իր նպատակին հասնելու համար, սակայն հակառակ իր ճկունության՝ չի կարողացել վայելել իր տքնաջան աշխատանքի պտուղները, փոխարենը ծերունազարդ Հայրապետին վիճակվել է 1949 թ. տեսնել Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քանդումը և տասնյակ հազարավոր հայերի աքսորը հյուսիսային Ղազախստան, որոնց թվում էին սփյուռքից նոր հայրենադարձվածներ:

Հայոց Հայրապետին անգամ վիճակված չէր մյուռոն օրհնել. 1926 թվականից մյուռոն չէր օրհնվել: Մի քանի անգամ որոշվել էր կատարել Հայոց Եկեղեցու ամենակարևոր արարողություններից մեկը, սակայն ամեն անգամ հետաձգվում էր: 1926 թ. մյուռոնօրհնությունից հետո՝ մինչև 1955 թվական, մյուռոնի օրհնություն չկատարվեց: Դա պայմանավորված էր խորհրդային իշխանությունների հակահայկական քաղաքականությամբ: Չնայած այդ քաղաքականությանը՝ Գևորգ Չ Չորեքչյան Հայրապետն ամեն ջանք գործադրում էր, որ կարողանար կատարել հայ ժողովրդի ամենանվիրական ազգային-եկեղեցական հանդեսը, սակայն չի կարողանում հասնել նպատակին:

Հայոց Հայրապետը վախճանվում է 1954 թ. մայիսի 9-ին, թաղվում Մայր տաճարի բակում:

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գևորգ Չորեքչյանի հեռագիրը Ի. Ստալինին

Մոսկվա, Կրեմլ,
1943 թ., հունվարի 20

Մեծարգո Իոսիֆ Վիսսարիոնովիչ:

Ձեր հանճարեղ ղեկավարությամբ և Աստծո ողորմածությամբ Կարմիր Բանակը հաղթականորեն ջախջախում է արյունռուշտ և ատելի թշնամուն, վռնդելով նրան մեր սրբազան հողից: Կարմիր Բանակի շարքերում, ՍՍՌՄ մյուս ժողովուրդների հետ միասին, մեր հայրենիքի թշնամիների դեմ հերոսաբար մարտնչում են նաև հայ ժողովրդի զավակները:

Կատարելով իմ պարտքը հայրենիքի հանդեպ, աղոթում եմ Ամենաբարձրյալին՝ սովետական զենքի հաղթության համար, փառապանծ Կարմիր Բանակի հզորությունն էլ ավելի ուժեղացնելու և թշնամու վերջնական ջախջախումն արագացնելու համար: Էջմիածնի կաթողիկոսարանը «Սասունցի Դավթի» անվան տանկային շարասյուն կառուցելու ֆոնդին հատկացնում է բրիլիանտներով զարդարված մի թանկարժեք պանակե և այլ թանկարժեք իրեր պլատինից ու բրիլիանտներից՝ ավելի քան 800 հազար ռուբլի արժողությամբ, 1000 անգղիական ֆունտ ստերլինգ և 50 հազար ռուբլի:

Խնդրում եմ Ձեր կարգադրությունը ՍՍՌՄ պետական բանկում հատուկ հաշիվ բանալու մասին:

Միաժամանակ հատուկ կոնդակով դիմում եմ աշխարհիս բոլոր հավատացյալ հայերին, որ իրենց խնայողություններով մասնակցեն «Սասունցի Դավթի» անվան տանկային շարասյան կառուցմանը: Լիովին հավատացած եմ, որ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան հայերը կարձագանքեն մեր հովվական կոչին, ինչպես արձագանքեցին պատերազմի սկզբին մեր կոնդակին, կազմակերպելով հայկական բոլոր գաղութներում կարմիր բանակին և տուժած բնակչությանն օգնելու կոմիտեներ, որոնք հավաքեցին և ուղարկեցին ավելի քան 15 000 դոլար ու ներկայումս շարունակում են իրենց գործունեությունը:

Թանկագին Իոսիֆ Վիսսարիոնովիչ, ընդունեցեք մեր օրհնությունը և հավատացյալ հայերի ու հոգևորականության ողջույնը:

Ամենայն Հայոց կաթողիկոսի Ազգընտիր Տեղակալ

Գևորգ Արքեպիսկոպոս Չորեքչյան

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Չ Չորեքչյանի նամակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերար Հայկ Գավուքճյանին

23 մարտի 1948 թ.
Ս. Էջմիածին

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՀԱՅԿ ԳԱՎՈՒՔՃԵԱՆԻՆ

Յարգելի եւ սիրելի

Ձեր երկու գրութիւնները 1947 թուի Նոյեմբեր 1-ին եւ տարւոյս Յունուարի 19-ին տողաց ստացել ենք: Նաեւ բժիշկ Մկրտիչ Բնակունին յանձնեց Մեզ Ձեր երրորդ գրութիւնը եւ տուաւ իր զեկուցումը, որ սակայն Ամերիկահայութեան կեանքի պատկերը տալուց շատ հեռու էր, այլ զուտ բացասական գծերով նկարագիրն էր տեղիդ հայ հոգեւորականութեան եւ յատկապէս Տ. Տիրան Եպիսկոպոսի, որ Մեզ չափազանց վշտացրեց: Սորա հակառակ գծերով նկարագրեց բողոքական պատուելիներին, այնպէս որ Մենք այն տպաւորութիւնը ստացանք թէ ինքը բողոքական է: Այնու հանդերձ ցաւով պիտի յայտնենք, որ նա թոքերի բորբոքումով հիւանդացել եւ վաղճանուել է. Աստուած հոգին լուսաւորէ:

Ուրախ ենք, որ ի վերջոյ հնարաւոր եղաւ ուղարկել Ձեր երեք սաների խմբական եւ անհատական լուսանկարները: Ձեր սաներն են 1. Այնթապեան Փայլակ Պօղոսի. Սիւրիայի Անտիոք քաղաքից է, երրորդ կուրսի ուսանող, ուսմամբ եւ վարքով գերազանց: 2. Գրիգորեան Արմենակ Տիգրանի. Էջմիածնի շրջանի Զէյվա գիւղից, վարքով գերազանց, ուսմամբ լաւ: 3. Ղազարեան Մովսէս Մանուկի. Սիրիայից, ուսմամբ եւ վարքով գերազանց:

Վերոյիշեալներն այնպիսի սաներ են, որոնք այժմեանից պատրաստ են հոգեւոր կոչում ստանալու եւ ամենայն հաւանակութեամբ Հոգեւոր ճեմարանում իրենց ուսումն աւարտելուց յետոյ կուղարկուեն Ամերիկա եւ այլուր համալսարանում աստուածաբանութիւն ուսանելու, որպէսզի ապագայում դառնան Հոգեւոր ճեմարանի դասատուներ:

Երեւի Դուք էլ չէք հրաժարուի նոցա բարերարը մնալու ցաւարտ իրենց ուսման, որով ոչ միայն կըմխիթարուիք Ձեր բարեգործութեան արդիւնքը տեսնելով, այլ եւ մշտական աղօթողներ կունենաք Ձեր կեանքի ու Ձեր գերդաստանի արեւշատութեան եւ երջանկութեան համար ի դէմս Մեր, Ս. Էջմիածնի միաբանութեան եւ սաներիդ: Սոյնպէս նաեւ վստահ ենք, որ ապագայ Ձեր բարեգործութիւններով նաեւ Ազգի երախտագիտական զգացմունքների արտայայտութեան էլ կարժանանաք:

Հաճութեամբ կարդացինք, որ շուտով Հայաստանի Պետական հրատարակչական Ցինկոգրաֆիայի բաժանմունքին պիտի ուղարկէք Ցինկոգրաֆիայի մեքենաներ եւ սակայն Ս. Էջմիածնի Տպարանին ուղարկելու յիշատակութիւն չկար. չենք ուզում հաւատալ, որ մոռացած լինիք Մեզ եւ Ձեր խոստումը այդ առթիւ:

Չափազանց ուրախ ենք, որ Դուք հետաքրքրւում էք Ս. Էջմիածնի վիճակով եւ որ ոգեւորուած էք յատկապէս Հոգեւոր ճեմարանով: Գիտենք նաեւ, որ այդ զգացմունքը ունի նաեւ ընդհանուր առմամբ Ամերիկահայութիւնը. սակայն այդ հաստատութեան հիմնական ապահովութեան մասին դեռ չէ մտածուում: Այդ առթիւ յաջորդ գրութեամբ իրազեկ կանեմ Ձեզ Մեր ծրագրի եւ արած ու անելիք քայլերիս մասին, որ Դուք էլ աջակից լինէք գործին հող պատրաստելով Ձեր շրջանում Մեր ծրագրի կենսագործման համար: Ներփակ կըգտնէք Դուք Երրորդ կուրսի ուսանողների խմբանկարը, որոնց մէջ են նաեւ Ձեր սաները, որ կգտնէք համարներով, այլ եւ նոցա առանձին լուսանկարները:

Յարգանօք եւ օրհնութեամբ
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Հրատարակության պատրաստեց Սիլվա ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ

Մեծավաստակ ճեմարանականների՝ լայն զանգվածներին ոչ շատ հայտնի մի քանի անուն

Ռուբեն Տեր-Մինասյան (1881–1951 թթ.): Հայդուկապետ, Հայաստանի առաջին հանրապետության ՆԳ-ի և պաշտպանության նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը բարձրագույն կրթությունն սկսել է Գևորգյան ճեմարանում՝ աշակերտելով Հ. Մանանդյանին, Ս. Կանայանցին, Մ. Աբեղյանին, Հր. Աճառյանին, Կ. Կոստանյանին, Հ. Հովհաննիսյանին և ուրիշների: «Հայ հեղափոխականի մը հիշատակները» յոթհատորանոց հուշագրության մեջ նա, ակնածանքով խոսելով իր ուսուցիչների մասին, գրում է, որ նրանք ցանկանում էին իրենց աշակերտներին դարձնել վարդապետ, ուսուցիչ, հոգևորական, բայց հակառակ նրանց ցանկությանը՝ իր տարեկից ճեմարանականներից շատերը դարձան հեղափոխական և դաշնակցական: Ճեմարանի ուսումնասեր միջավայրն է կերտել Ռուբեն Տեր-Մինասյանի ներաշխարհը: Ռ. Դարբինյանն այսպես է ներկայացնում ազգային-ազատագրական շարժման հորձանուտը նետված մարտական ընկերոջ կյանքում Եկեղեցու և ճեմարանի դերը. «Եղած ըլլալով Գևորգյան ճեմարանի սան՝ ան խորապես կապված էր էջմիածնի և հայ ազգային եկեղեցու հետ: Ռուբենը կսիրեր էջմիածինը ոչ միայն ազգային քաղաքական նկատառումներով, այլև խորհրդապաշտական, կրոնական շարժառիթներով»:

Ռուբեն Տեր-Մինասյանը հայդուկային շարժմանը և Հայ հեղափոխական դաշնակցությանն անդամակցել է 1902 թվականից: Սուլուխի կռվից ու Գևորգ Չաուշի զոհվելուց հետո նա դառնում է Տարոնի հայդուկապետը: 1920 թ. մայիս–նոյեմբեր ամիսներին Համո Օհանջանյանի գլխավորած Բյուրո-կառավարության մեջ ստանձնել է ներքին գործերի և ռազմական նախարարի պաշտոնը: Ակտիվ մասնակցություն է ունեցել 1919–1920 թթ. թուրք-թաթարական խռովությունների և 1920 թ. բոլշևիկյան Մայիսյան ապստամբության ճնշման գործում: Հայաստանի խորհրդայնացումից հետո Ռուբենը որոշ ժամանակ գործել է Սյունիքում, այնուհետև Գարեգին Նժդեհի բանակի հետ տեղափոխվել է Իրան, այնտեղից էլ Փարիզ՝ որպես ՀՅԴ-ի անդամ շարունակելով քաղաքական գործունեությունը:

Արտաշես Աբեղյան (1878–1955): Հասարակական երևելի գործիչ, բանասեր, թարգմանիչ, պատմաբան Արտաշես Աբեղյանը գրականագետ, ճեմարանավարտ և ապա ճեմարանի դասախոս Մանուկ Աբեղյանի եղբորորդին է: Թիֆլիսի Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո՝ 1895–1899 թթ., ուսանել է Գևորգյան հոգևոր ճեմարանում: Նրա ճեմարանական ուսուցիչներն են եղել հորեղբայրը, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը, Գ. Հովսեփյանը, Ս. Կանայանցը և ուրիշներ: Հետևելով բանահավաք հորեղբորը՝ ճեմարանական Արտաշեսը 1899 թ. գրի է առնում հայկական վիպերգի երկու տարբերակ՝ մոկաց և արարատյան բարբառներով, որոնք առանձին գրքով լույս են տեսնում 1902 թ. Թիֆլիսում: Նա մեր էպոսի արարատյան բարբառով տարբերակի առաջին հրատարակիչն է: Ճեմարանն ավարտելուց հետո նա, ինչպես իր ճեմարանավարտ ընկերները, մեկնում է Գերմանիա, փիլիսոփայական դոկտորի աստիճանով ավարտում Մարբուրգի համալսարանը: 1909 թ. հրատարակել է մինչև այժմ գործածելի ուղղագրական բառարանը, որն ընդգրկում է 10 հազար բառից բաղկացած բառացանկ:

1919–1920 թթ. եղել է Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի անդամ, խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ քաղաքական վտարանդի: Ապաստանել է Գերմանիայում, դարձել Բեռլինի, ապա՝ Մյունխենի համալսարանների արևելյան լեզուների ֆակուլտետների հայագիտական ամբիոնների հիմնադիր և պրոֆեսոր: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գլխավորել է 1942 թ. Բեռլինում ստեղծված Հայ ազգային խորհուրդը, որի նպատակն էին Գերմանիայի օգնությամբ Հայաստանի ազատագրումը բոլշևիկյան լծից ու ռուսական տիրապետությունից, Հայաստանի քաղաքական ինքնավարության վերականգնումը:

Ռուբեն Աբրահամյան (1881–1951): 1893 թ. ընդունվել է Գևորգյան ճեմարան՝ աշակերտելով Մ. Աբեղյանին, Ստ. Կանայանցին, Կոմիտասին, Գ. Հովսեփյանին, Կ. Կոստանյանին և այլոց: 1899 թ., ավարտելով ճեմարանի դպրոցական բաժինը, ուսումը շարունակել է Բաքվի և Երևանի գիմնազիաներում: 1911 թ., ընդունելով ճեմարանի տեսչության հրավերը, սկսում է դասավանդել ճեմարանի զույգ բաժիններում. դպրոցական բաժնում՝ ռուսաց լեզու, լսարանական բաժնում՝ լեզվաբանություն և փիլիսոփայության պատմություն: Իր առաջին լեզվաբանական գործերը տպագրել է «Արարատ» ամսագրում: 1935–1937 թթ. սովորել է Սորբոնի համալսարանի լեզվաբանական բաժանմունքում և Բենվենիստի ղեկավարությամբ պաշտպանել Սպահանի և Համադանի հրեաների պարսկերեն բարբառներին նվիրված ատենախոսություն: 1936 թ. իրանական կառավարության հանձնարարությամբ Թեհրանի համալսարանում հիմնել է հին պարսկերենի և պահլավերենի ամբիոն, որը ղեկավարել է տասը տարի:

Նիկոլ Գալանդերյան (1881–1944 թթ.): Դեռ Ակնի Վերի թաղի Նարեկյան երկսեռ դպրոցում սովորելու տարիներից Նիկոլի հայրը մեծ ցանկություն ուներ, որ որդին եկեղեցում տիրացու դառնար, շապիկ հագներ և «ձայնավորություն» աներ: Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող կոտորածներից փախչելով՝ Գալանդերյանների ընտանիքը տեղափոխվում է Ս. Պետերբուրգ, իսկ 1900 թ. Նիկոլը եղբոր հետ ուղևորվում է Էջմիածին՝ ճեմարան ընդունվելու, ինչպես որ հոր ցանկությունն էր: Նիկոլը մաս է կազմում ճեմարանի դպրաց երգչախմբի, որը պատրաստում էր հաջորդ օրվա ժամասացության շարականները: Ճեմարանական այս տարիներին էլ ձևավորվում է ապագա մեծանուն կոմպոզիտորը, որն իր «Ինքնակենսագրության» մեջ այսպես է նկարագրել ճեմարանի ունեցած դերը. «Ճեմարանը իմ մեջ եղած այդ թաքուն ուժը՝ դեպի երգն ու երաժշտությունը ունեցած հակումներս, զարթնեցրել է»: Գալանդերյանի երգերը գրված են քաղաքային ժողովրդական երգարվեստի ոճով՝ Վ. Տերյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի, Մ. Մեծարենցի, Դևի և այլոց բանաստեղծությունների հիման վրա: Նրա լավագույն երգ-ռոմանսները՝ «Արդյոք ո՞ւր ես», «Ես սիրում եմ», «Հեռանալ մոռանալ», «Կապույտ աղջիկ», «Ափսոսանք», «Հովիկ», «Դու նորից եկել ես», «Ծիրանափառ գիշերներ», «Կանցնին օրեր», «Այնպես նազիկ» և այլն, անձնական քնարերգության արտահայտություն են: «Գյուղական էսքիզների» մեջ առանձնանում է «Ակնա հարսանիք» խմբերգերի շարքը: Գրել է «Լալվարի որսը», «Փարվանա», «Հովիվը» (ըստ Վրթանես Փափազյանի «Լուրդա-լուր»-ի) օպերաները, մանկական բաժնում՝ լեզվաբանություն և փիլիսոփայության պատմություն: Իր առաջին լեզվաբանական գործերը տպագրել է «Արարատ» ամսագրում: 1935–1937 թթ. սովորել է Սորբոնի համալսարանի լեզվաբանական բաժանմունքում և Բենվենիստի ղեկավարությամբ պաշտպանել Սպահանի և Համադանի հրեաների պարսկերեն բարբառներին նվիրված ատենախոսություն: 1936 թ. իրանական կառավարության հանձնարարությամբ Թեհրանի համալսարանում հիմնել է հին պարսկերենի և պահլավերենի ամբիոն, որը ղեկավարել է տասը տարի:

Նիկոլ Գալանդերյան (1881–1944 թթ.): Դեռ Ակնի Վերի թաղի Նարեկյան երկսեռ դպրոցում սովորելու տարիներից Նիկոլի հայրը մեծ ցանկություն ուներ, որ որդին եկեղեցում տիրացու դառնար, շապիկ հագներ և «ձայնավորություն» աներ: Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող կոտորածներից փախչելով՝ Գալանդերյանների ընտանիքը տեղափոխվում է Ս. Պետերբուրգ, իսկ 1900 թ. Նիկոլը եղբոր հետ ուղևորվում է Էջմիածին՝ ճեմարան ընդունվելու, ինչպես որ հոր ցանկությունն էր: Նիկոլը մաս է կազմում ճեմարանի դպրաց երգչախմբի, որը պատրաստում էր հաջորդ օրվա ժամասացության շարականները: Ճեմարանական այս տարիներին էլ ձևավորվում է ապագա մեծանուն կոմպոզիտորը, որն իր «Ինքնակենսագրության» մեջ այսպես է նկարագրել ճեմարանի ունեցած դերը. «Ճեմարանը իմ մեջ եղած այդ թաքուն ուժը՝ դեպի երգն ու երաժշտությունը ունեցած հակումներս, զարթնեցրել է»: Գալանդերյանի երգերը գրված են քաղաքային ժողովրդական երգարվեստի ոճով՝ Վ. Տերյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի, Մ. Մեծարենցի, Դևի և այլոց բանաստեղծությունների հիման վրա: Նրա լավագույն երգ-ռոմանսները՝ «Արդյոք ո՞ւր ես», «Ես սիրում եմ», «Հեռանալ մոռանալ», «Կապույտ աղջիկ», «Ափսոսանք», «Հովիկ», «Դու նորից եկել ես», «Ծիրանափառ գիշերներ», «Կանցնին օրեր», «Այնպես նազիկ» և այլն, անձնական քնարերգության արտահայտություն են: «Գյուղական էսքիզների» մեջ առանձնանում է «Ակնա հարսանիք» խմբերգերի շարքը: Գրել է «Լալվարի որսը», «Փարվանա», «Հովիվը» (ըստ Վրթանես Փափազյանի «Լուրդա-լուր»-ի) օպերաները, մանկական երգեր ու օպերաներ («Չարի վերջը», «Պողոս-Պետրոս», «Պապն ու շաղգամը», «Ուլիկը» և այլն):

Արտակ Դարբինյան (1878–1950 թթ.): Կուսակցական, հասարակական-քաղաքական գործիչ Արտակ Դարբինյանն ազատագրական պայքարի գաղափարախոսներից էր, Արմենական կուսակցության նվիրյալ անդամներից, 1921 թ.՝ Կ. Պոլսում կազմակերպած Ռամկավար-ազատական կուսակցության հիմնադիրը: Նա 1894–1899 թթ. սովորել է Գևորգյան ճեմարանում՝ հասցնելով մինչ այդ մանկավարժական և կուսակցական բուռն գործունեություն ծավալել: 1896 թ. Վանի «մեծ դեպքերը» ստիպել են, որ նա թողնի ուսումն ու հեռանա, սակայն Խրիմյան Հայրիկը կանխել է նրա և ընկերների հուզումը: Նախքան ճեմարանն ավարտելը՝ 1898 թ., արմենական հեղափոխականների շարքերում լինելու պատճառով, ցարական ոստիկանության կողմից ձերբակալվել և բանտարկվել է Երևանի բերդում՝ այստեղ 50 օր անցկացնելով նախկին ճեմարանական, բանաստեղծ Ավետիք Իսահակյանի հետ: 1899 թ., երբ ավարտում էր ճեմարանը, ցանկանում էր կուսակրոն դառնալ, սակայն Խրիմյան Կաթողիկոսը նրան նշանակում է Վանում՝ որպես կրթադաստիարակչական աշխատանքների պատասխանատու: Գործել է ֆիդայիներ Սեքարեցի Սաքոյի, Վարդանի, Նիկոլ Դումանի հետ: Մասնակցել է Վանի 1915 թ. ինքնապաշտպանական կռիվներին, ընտրվել Վասպուրականի նահանգային վարչության ընդհանուր քարտուղար: Ռուսական զորքերի և Վասպուրականի հայության նահանջից հետո անցել է Թիֆլիս, այնուհետև՝ Կ. Պոլիս: 1922 թ., որպես Ռամկավար-ազատական և ՀՅԴ կուսակցությունների պատվիրակ, եկել է Անդրկովկաս, Թիֆլիսում հանդիպել Ալեքսանդր Մյասնիկյանի, Երևանում՝ Խորհրդային Հայաստանի ղեկավարների և Գևորգ Ե Կաթողիկոսի հետ՝ արևմտահայերի իրավունքների պաշտպանության պահանջով, սակայն մերժվել է, որից հետո հաստատվել է Փարիզում: 1946–1948 թթ. գլխավորել է ֆրանսահայերի ներգաղթի կենտրոնական հանձնաժողովը: Գրել է «Վանի նահանգը ներկայումս», «Հայ ազատագրական շարժման օրերեն» աշխատությունները:

Գուրգեն Էդիլյան (1885–1942 թթ.): Հայ դասական մանկավարժության և հոգեբանության ակնառու ներկայացուցիչներից է հոգևորականի ընտանիքում ծնված Գուրգեն Էդիլյանը՝ Հայաստանում փորձարարական հոգեբանության առաջին գիտական լաբորատորիայի հիմնադիրը, որն աքսորական տարիներին ևս (1937–1942 թթ.), զանց առնելով ամեն դժվարություն և նեղություն, հեղինակել է 35 մեծարժեք աշխատություն: Գուրգենը հոր՝ Խրիմյան Հայրիկին ուղղված խնդրագրի միջնորդությամբ ընդունվում է Գևորգյան ճեմարանի երրորդ դասարան, որը բարձր առաջադիմությամբ ավարտում է 1903 թ. ամռանը և հայոց Հայրիկի տնօրինությամբ 1904 թ. մեկնում Ենայի, Լայպցիգի, Բեռնի համալսարաններ՝ ուսումը շարունակելու: Փիլիսոփայական դոկտորի աստիճանով վերադառնալով հայրենիք՝ նա ձեռնամուխ է լինում գիտամանկավարժական բուռն գործունեության՝ դասավանդելով մանկավարժություն, հոգեբանություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, հայոց լեզվի մեթոդիկա, գործնական գերմաներեն: Դասավանդմանը զուգահեռ նա աշխատանքներ է ծավալում՝ նորացնելու ճեմարանի ուսումնամեթոդական ծրագրերը, առաջ քաշում գաղափարներ՝ ստեղծելու ճեմարանական ուսուցչական և ուսանողական միություններ, ճեմարանի թանգարան և հենակետային դպրոց՝ ճեմարանականի դիտողական ունակություններն ու գործնական հմտությունները զարգացնելու նպատակով: Ճեմարանական մանկավարժական նրա գործունեությունն ընդհատվում է 1914 թ., երբ Էդիլյանը մեկնում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոց՝ դասավանդելու:

Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Վատուածաշունչ՝ գիրք գրոց

Եթէ կեանքում հարպտութիւնն է յանկալի ունեցուածքը, ապա ո՞ր հարպտութիւնն է աւելի մեծ, քան իմաստութիւնը, որ կարող է ամէն ինչ անել .... Եթէ մարդ արդարութիւն է սիրում, ապա արդարութեան վաստակի արդիւնքը առաքինութիւնն է, որովհետև նա է, որ սովորեցնում է գիտութիւն եւ խոհեմութիւն, արդարամտութիւն եւ արիութիւն, որոնցից առաւել պիտանի քան չկայ մարդու կեանքում:

Իմաստութիւն Սողոմոնի, 8:5-7

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 16.09.2024 թ.
Տպաքանակը՝ 1265

Կարապետ սարկաւագի ճառը

↩ էջ 5

ամ՝, ես ճանաչում եմ այդ հայուածքը, դարձ՛ուր, տանել չեմ կարող, նա հալում մաշում է իմ երիտասարդ հասակը: Տ՛ես, ժողովո՛ւրդ, հայի արիւն արցունքը թող լինի մեր ուխտի չորրորդ կնիքը. քո հառաչանքը երբէք դադար չտայ մեզ թմրութեան անկողնի վերայ՝ ընդոստ վեր ելնենք, Կայենի նման աստանդական շրջենք, եթէ քո ցաւերը տեսնենք ու անտարբեր մնանք. ուղեկցի՛ր և դու մեզ քո մաղթանքներով. լուսաւորչի Աստուածը չի նիրհում, Նա քո աղաչանքն էլ կլսէ:

Եւ վերջապէս դուք՝ ներկայացուցիչներ մեր ուսուցիչների և դաստիարակների, որ մեր մանուկ սրտերն ու մտքերը ղեկավարել էք, բարւոյ և ուղղութեան շաւղի վրայ դրել. վերջինը ձեզ ենք յիշում, բայց ոչ ի յետինս, և դուք եղէք մեր ուխտին վկայ և աղօթեցէք, որ ձեր ցանած բարի սերմերը զարգանան և պտղաբերեն:

Իսկ դո՛ւք՝ Գէորգեան ճեմարանի սիրասո՛ւն սաներ, մեր սննդակից եղբայրներ, որ նոյն դաստիարակութեան շաւղով ընթանում էք մեր յետևից. նոյն Մասեաց հովն է և ձեր կուրծքերին զօրութիւն տալիս, նոյն սուրբ տեղիք են իրենց հովանին ձեր վերայ սփռում, այս աւերակների ոգին ձեզ այժմ տակաւին օրօր է ասում. անո՛ւշ այդ կազդուրիչ քունը բարեյաջող թող լինի արթնութեան որպէս. յո՛ւշ ձեզ այն ժամանակ այս պահուն խորհուրդը: Թո՛ղ շնորհաց Ս. Հոգին առաջնորդէ ձեր քայլերը և տայ իւրաքանչիւրին ինչ որ արժան է և Իւր բարի կամաց տրամադրութիւնը. սակայն երբ ժամը հնչէ, ու այս ուխտի կնիքը նաև ձեր առաջ բացուի, Ս. Եկեղեցու սպասաւորութեան գործին նուիրելու հրաւիրէ, քայլեցէք անվախ վստահութեամբ, դրէք ձեր ձեռքը մաճի վերայ և յետ մի նայէք, արտի Տէրը կհոգայ թէ՛ ձեր և թէ՛ իւր ցանքի մասին, խուլ մի մնաք միայն այս ժողովրդի հառաչի համար, այս սրբազան տեղեաց խորհրդաւոր լեզուն հասկանալ սովորեցէք: Այո՛, այդ լեզուն խօսէ թո՛ղ այս ժամուն և մեր սրտերում. մեր շնորհատու մայր Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ գերագահ Աթոռ և լուսոյ խորան, թո՛ղ և մեր շուրջ շողայ այն լոյսը, որով յղփացած մեր երանելի նախնիք նահատակութեան ասպարէզ ելան, այդ լոյսը նուիրագործէ մեզ սրբութեամբ մօտենալու ահաւոր խորհրդոյն, քո սպասաւորութեան, քո վերաշինութեան գործի հաւատարիմ ծառայութեան արժանի շնորհքն ընդունելու: Երկնաւոր ճարտարապետ այս հրաշազան տաճարի, Յիսո՛ւս, անմա՛հ Խաչեցեալ.... «Ո՞ տացէ ի Սիոնէ զփրկութիւն Իսրայէլի, ի դարձուցանել Տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ».

«Զմի խնդրեցի ի Տեառնէ և զայն աղաչեմ բընակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց»:

Նյութի աղբյուրը՝ «Արարատ», 1894 թ., թիվ Թ